

ԳՐԱԿԱՆ ՑՈՒՔԵՐ

7

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԵՐԳԵՐ - ՔՍՈՒԵԱԿՆԵՐ

ԼԵԳԵՆԴՆԵՐ - ԲՍԱԼԱԳՆԵՐ - ԱՌԱԿՆԵՐ

ՊԱՏԽՈՒՄԾՔՆԵՐ - ՀԵՔԵԱԹՆԵՐ

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

ՎԵՆԵՏԻԿ - Ս. ՂԱԶԱՐ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

2991.99 | 29915.

D-89 | Pm. Ind. 2.

Tip. 1/2 - Pm. Ind. 1/2 - 1/2 -

Tip. 1/2 - Pm. Ind. 1/2 -

20m.

18/5

452

ԳՐԱԿԱՆ ՅՈՒԹԵՐ

7

Հրատարակութիւն
դպրոցական գործածութեան համար, պատրաստ-
ուած գրական եւ դաստիարակչական պահանջներու
համաձայն:

ՊԵՐԻՔԱՐԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳՐԱԿԱՆ ՑՈՒՔԵՐ

891.99

Բ-89



USDA 44.000 1 1961 P.

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԵՐԳԵՐ - ԳԱՌԵԱԿՆԵՐ

ԼԵԳԵՆԴՆԵՐ - ԲԱԼԼԱԴՆԵՐ - ԱՌԱԿՆԵՐ

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ - ՀԵՔԵԱԹՆԵՐ

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ



ՎԵՆԵՏԻԿ - Ս ՂԱԶԱՐ

1944

29975
A 28041

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

(1869 - 1923)

ԿԵԱՆՔԸ

Յովհաննէս Թումանեան մեր արեւելահայ գրականութեան այն բացառիկ դէմքերէն է, որ անցեալ դարու վերջալոյսին հրապարակ մտաւ առանց շփոթի. ունեցաւ յարանուն վերելք մը արուեստի՝ ինչպէս համբաւի ու փառքի. ապրեցաւ կեանք մը՝ որ ինքնին բանաստեղծութիւն մըն է համակ գուարք ու պայծառ, ինչպէս իր քողած բանաստեղծութիւնն իսկ: Եւ ասոր համար է որ ան կը մնայ միշտ ամբողջ Հայ ժողովրդեան մեծապէս սիրուած ու գնահատուած բանաստեղծը ժողովրդական:

Յ. Թումանեան կ'ուզէր հաստատել քէ ինք շատաւիղ է Մամիկոնեան¹ ազնուական տոհմին, եւ քէ իր ընտանիքը «վաղուց է հաստատուած Լօռու Դսեղ գիւղում»²: Նա իր ինքնակենսագրութեան³ մէջ կը գրէ. «Իմ հայրը, Տէր Թադէոսը, նոյն գիւղի քահանան էր: Ամենալաւ եւ ամենամեծ բանը որ ես ունեցել եմ իմ կեանքում, այդ եղել է իմ հայրը: Նա ազնիւ մարդ էր եւ ազնուական բառի բովանդակ մտքով: Զափազանց մարդասէր եւ առատաձեռն եւ գուարեաբան, սակայն միշտ ունէր մի խոր լըր-

¹ Տե՛ս իր «Քաջքերի կեանքից» յօդուածը «Հորիզոն»ի մէջ, Թիֆլիս, 1894:

², ³ Տե՛ս իմ մանուէլ քէնյ. Նազարեանցի «Ընտիր հատուածներ», տպ. Թիֆլիս, Ա. տպ. Ա. հտ. (էջ 265) ուսկից կ'օգտուինք քաղուած օրէն:

շուրթին... Իսկ մայրս բուրբուլին ուրիշ մարդ էր: Երկու, ծայրայեղորեն տարբեր արարածներ հանդիպել են իրար: Մայրս - Սօման, որ նույն գիւղից էր, սարում աչքը բաց արած ու սարում մեծցած, մի կատարեալ սարի աղջիկ... չէր կարողանում համբերել հօրս անփոյր ու շռայլող բնաւորութեանը. եւ գրեթէ մըշտական վէճի մէջ էին այդ երկու հոգին...: Իրիկունը երբ տուն էինք հաւաքուում, մայրս անդադար խօսում էր օրւայ անցածի կամ վաղւան հոգսերի մասին: Իսկ հայրս, քինկը տւած [ընկողմանած] ածում էր իր չօնգուրն [Երաժշտ. գործիք մը] ու երգում Քեօթողին, Քեարամը, կամ որ եւ է հոգեւոր երգ: Ահա այս ծնողներից ես ծնւել եմ 1869 թւի փետր. 7-ին [հին տոմար]: Մանկութիւնս անց եմ կացրել մեր գիւղում ու սարերում: Ուր տարեկանին նա իր նախնական ուսումը կ'առնէ ծննդավայրին մէջ, «Սեակ վարժապետի» ձեռքին տակ, որ «մեզ կառավարում էր, կ'ըսէ, գաւազանաւ երկաքեաւ»: Ու կը շարունակէ. «Տասը տարեկան, մեր գիւղից հեռացել եմ Զալալօղլի... Տիգրան վարժապետի... ուսումնարանը» ուր կը սորվի նա երեք տարի. « եւ այնտեղից էլ, կ'ըսէ, անցել եմ Թիֆլիս՝ Ներսիսեան դպրոց՝ որ չեմ աւարտել»:

Այնուհետեւ, հարկադրուած կեանքի պայմաններէն, հակառակ իր գրական ձկնումին, մտաւ նա գործնական ասպարէզ իրրեւ գրագիր Թիֆլիսի Հայոց առաջնորդարանի կոմսիտորիային (1887-1892), որու եկեղեցականներու մասին գրած իր մէկ երգիծաբանութիւնը սակայն պատճառ դարձաւ որ նա այդ պաշտօնէն հեռացուի, ինչպէս կ'ակնարկէ «Պօէտն ու Մուսայ»ի մէջ.

«Այնքան արեւ, սատանի պէս - Որ զըրեցի ձեծիս պարսաւ.

Նա էլ - Կո'րէ, կո'րէ ասաւ...»

Ուրիշ գործնական պաշտօնի փորձ մ'ալ անյաջող երթալով, քողոց ամէն ասպարէզ եւ ամբողջապէս նուիրուեցաւ գրականութեան.

«Ողջ մերժեցի լոկ քեզ համար» (Պօէտն ու Մուսան):

Ու ապրեցաւ նա ազգային հասարակական կեանք մ'ալ մեծապէս գնահատելի դերով՝ պատմական բացառիկ շրջանի մը մէջ:

Տասնեւուրը տարեկանին ամուսնացած՝ հայրն եղաւ տասնեակ մը զուակներու, որոնց կ'ակնարկէր կատակով. «Ա'խպէր, էնքան շատ են որ անուններն էլ եմ մոռանում», քէպէտ իրականին մէջ շատ մեծ էր իր հայրական սէրն ու գուրգուրանք⁵, ինչպէս կը տեսնուի իր զգայուն տողերէն որ անոնց է նուիրած:

Շուրջ 20 տարիներ ապրեցաւ նա Թիֆլիսի մէջ. իր «Վերնատունը», ինչպէս կ'անուանէր նա իր բնակած վերնայարկը, գրական-ընկերական կեանքի ջերմ վառարան մըն էր, ուր կը յաճախէին հմայուած՝ այդ օրերու ցայտուն դէմքեր, Պոռշեան, Ղ. Աղայեան, Շիրվանգադէ, Ա. Ահարոնեան, Ա. Իսահակեան, Ադրայեան, Փափազեան, Դէմիրճեան եւն. հուսկ լէօ՝ զինքը ծագրող «բունդ պուրիցիստ-ֆննադատ»ը անգամ: Ու դեռ երիտասարդներէն՝ Տէրեան, Վալադեան, Ս. Զօրեան, Արմենուհի Տիգրանեան, Վ. Ահարոնեան, եւն.:

1908-ին երբ Թ. ուրիշներու հետ դրուեցաւ Թիֆլիս Մետեխի բանտը, փակուեցաւ *Վերնատունը*. սակայն 1909-ի աշնան իր ազատութեան հետ վերաբացուեցաւ ան, ու կրկին հոն իր շուրջը բոլորուեցան հին ու նոր սերունդի գրական դէմքեր: Այդ շրջանին ան ձեռնարկեց հիմնարկութեան եւ մաթագահն եղաւ «Հայ Գրողներու կովկասեան ընկերութեան»: Ու քիչ յետոյ ազգայինէ միջազգային գրական ակումբի փոխուեցաւ Թ.ի տունը, ուր կը հաւաքուէին նաեւ վրացի, Ռուս եւ նոյն իսկ Թաքար գրողներ:

4, 5 ՏԵՍ Վարդգէս Ահարոնեանի «Յովհաննէս Թումանեան - Մարդը ու բանաստեղծը». Բոստոն, 1936, էջ 25, 33 եւն.:

6 Օրինակ, «Իմ Արուսեակին - Իմ Արփիկին - Կ'անցնին օրերն, Անուշ Զան - Երկար, Երկար ժան եկայ» եւն. տե՛ս Յովհ. Թումանեանի «Գեղարուեստական երկեր» հրատ. Խմբ. Ե. Զարենցի. Երեւան, Պետհր. 1934 (տե՛ս Երգեր, Անտիպներ եւն.) էջ 99, 126 եւն.:

Թումանեան քէն երբեք չեղաւ իսկապէս կուսակցական-յեղափոխական, սակայն ինք ալ անոնց կարգին ամբաստանուեցաւ կրկին: Եւ ահա Հ. Յ. Դաշնակցութեան դատաւարութեան առիքով էր որ Թ. քէպէտ ստիպուած մամբարդեց Մոսկուա — Պետերբուրկ, սակայն բախտն ունեցաւ հոն ծանօթանալու ռուս գրողներուն:

1916-ին Վալերի Բրիւսով ծանօթ գրագէտն ալ ուրիշ ռուս գրողներու հետ մտերմացաւ Թ.ի եւ այդ առիքով էր որ, նոյնինքն Թ.ի քելադրութեամբ սկսաւ պատրաստուիլ ռուսերէն քարգմանութիւնը «Հայաստանի բանաստեղծութիւն» ընտիր հաւաքածոյին, գոր խանդավառ կ'ողջունեն Տէրեան եւ Ահարոնեան:

1919-ի փետր. 20-ին (նոր տոմար) Թումանեան, իր ծննդեան յիսնամեակին, առաքիյալ եղաւ ժողովրդական արտակարգ ցոյցերու՝ որոնց կայծ տուած էին Վ. Ահարոնեան եւ Մ. Գէորգեան:

1921-ի դեկտ. ին սիրելի բանաստեղծը բռնուեցաւ դեղնախտով: Վիրաբուժական գործողութեան արդիւնքը եւ 1922-ի ամառը ունեցած կազդուրումը երկար չտեսցին: Նոյն աշունը յայտնուեցաւ իր մէջ անողոք քաղցկեղը՝ որմէ բուժուելու համար Հայաստանի նոր կառավարութիւնը վնեց զինքը Բերլին դրկել: Հիւանդութիւնն եւ ուրիշ պարագաներ ստիպեցին որ նա մնայ Մոսկուա, ուր վախճանեցաւ 1923-ի մարտ 23-ին՝ համօրէն հայ ժողովրդեան խոր սուգին մէջ. մարմինը փոխադրուեցաւ Թիֆլիս եւ քաղուեցաւ Խոջիվանք:

Բարձրահասակ, արտաքինով կոկ ու մաքուր, յարգարուած կարն մօրուով, բարի աչքերով, կենսուրախ ու ժպտաղէմ, աշխոյժ այդ տիպարը, սրամիտ ու սրախօս, ժողովրդական գրոյցն ու առակները բերնին՝ կատակներով համեմուած, եղաւ գրագէտ մը բացառապէս եւ ամբողջապէս *ժողովրդական*. ու այդ վերջինին մէջ է որ — գրականէն գաւտ — կը ցոյայ Թումանեանի *ժարգը* կամ անոր նկարագիրը, գուարքօրէն դիտողը կեանքին, որու հոգւոյն մէջ կը բնակէր, կ'ըսէ Սիրունի, «Ծաղիկը անսպառ քաղցրութեան

Եւ գեղեցկութեան»⁷ միշտ, վայելող ու վայելցնող միանգամայն. որու դուռը բաց էր միշտ, ինչպէս սիրտը. եւ շէն ու առատ իր սեղանը. ու ինք կարծես չէր կրնար հոն նստիլ առանց բարեկամի, առանց հիւրի: Իսկական պատկերը իր նկարագրած ու սիրած հօր, սիրուած ու փնտռուած էր նա ամէն սեղանի սեղանապետ, ու արժանի էր «Թամատա ամենայն Հայոց» տիտղոսին՝ ինչպէս օր մը յորջորջած էր ինքզինքը:

Ունենալով հանդերձ գգայուն սիրտ, մասնակցելով իսկ միշտ հայ ժողովուրդի տառապանքներուն ու մեծ սուգին 1914-1918-ի շրջանին, ինչպէս մորմոքելով իր հարազատներուն եւ բարեկամներուն կորստեան վրայ, ապրեցաւ սակայն միշտ նոյն զուարթ ու կատակախօս Թումանեանը եւ չդադրեցաւ երբեք «Էէփ անել», ինչպէս ինք կ'ըսէր, Պաղտատի Հասանին պէս՝ զոր նկարագրած է իր «Քէֆ անողին քէֆ չի պակսիլ» արեւելեան գրոյցին մէջ:

* * *

Ազգային զործիչ կեանք մ'ալ ապրեցաւ Թ. ազգասէր ու հաշտարար դերով:

Մեծ գինքը հրապարակի վրայ կը գտնենք Հայ-Թաքարական ընդհարումներու օրով 1905-1906-ին: Նա հայ ու քաքար գիւղերն այցելելով ու հաշտարարի տենդագին պատգամաւորութիւններով՝ յաջողեցաւ Լօռին փրկել կոտորածներէ (1906). «Ես, ինչպէս ըսի, յանկարծ այդքան մեծ պաշտօնի»⁸ մէջ յայտնուելով եւ ձեռքիս մէջ ունենալով ուժ — ամէն ջանք գործ եմ դրել մեր գաւառներում խաղաղութիւն պահելու եւ կոտորածներուն առջեւն առնելու: Եւ այսօր ես այնքան գոհ չեմ որ գրականութեան մէջ մի որ եւ է բան եմ արել, որքան գոհ եմ, որ ակներեւ կարո-

⁷ Տե՛ս «Աստղեր որ կը մարին — Յ. Թումանեան», Նաւասարդ, 1923, Սեպտ. 19-20, Պուրբէջ:

⁸ Այդ աշխատութեան օրերուն՝ Թ. զործեր էր տեսակ մը քաղաքական-գիտական դիկտատոր:

դացայ իրար դէմ կանգնած ժողովուրդների սրերը պատեան դնել տալ⁹:

1914—1918 պատերազմի շրջանին հրահրողն է մա մախ հայ կամաւորական շարժումներուն, յետոյ ռազմականկատին վրայ հայ զինուորին փախալերը: Իսկ վանի նահանջին՝ սովի ու համա-
մարակի սեւ օրերուն մա գլուխ կը կանգնի օգնութիւն եւ ապաւէն հայրաշայթելու տասանորդուող հայ գաղթականներուն:

Թ. երէ երազեց յուսով եւ տեսաւ հայուն ազատութիւնը, սակայն դեռ տխուր օրեր յաջորդեցին: Զինադադարին մա մա-
խագահ եղաւ Հայկ. Բիւրոյին, եւ այս անգամ ալ գօտեպնդուե-
ցաւ Հայ-վրացական կռիւները դադրեցնելու:

1920-ին դարձեալ գլուխն է մա կամաւորներու կռիւն՝ քուր-
ֆերուն դէմ: Ու 1921-ին նոյն խաղաղասէր Թ.ը կը փութայ Ե-
րևան Դաշնակ — Պոլշեիկ կռիւը խափանելու:

1921-ի աշման, Հայ խորհրդային կառավարութեան օրով,
«Հայաստանի Օգնութեան կոմիտէ»ի համագումարին մէջ պատ-
գամաւոր ընտրուելով, մեկնեցաւ Կ. Պոլիս՝ Արտասահմանի Հա-
յութեան սէրն ու օժանդակութիւնը հրաւիրելու մայր հայրենիքին:

Ու հոս կարելի էր մաեւ ակնարկել քէ՛ ինչպէս Թ. եղաւ
ջերմ պաշտպան Անդրկովկասի դրացի Հայ-Թուրք-վրացի ժողո-
վուրդներու մերձեցման՝ յաջողելով շահիլ այդ ցեղերու մը-
տաւորական դասակարգը: Հետեւաբար զարմանալի չէ որ Թ. դար-
ձաւ՝ հայութենէն գատ՝ սիրուած ու գնահատուած ընկերական
ու գրական դէմքը մաեւ մեր դրացի ժողովուրդներէն:

* * *

⁹ Տէ՛ս Պօղոս Մակինցեանի յառաջարկը Յովհ. Թումանեանի
«Ընտիր դրուածներ»ուն մէջ, էջ 9, Պետհր. Երեւան, 1929, եւ
նոյն հեղինակին կարեւոր յօդուածը Թ.ի մասին «Նոր Ուղի»ի
մէջ, էջ 198—199, (1929, Երեւան):

ԳՈՐԾ ԵՐԸ

Թումանեան ինք կը պատմէ քէ «Շատ վաղ եմ սկսել ոտա-
նաւոր գրել: 10-11 տարեկան ժամանակս Լօրիս-Մելիքովի վրայ
երգեր էին երգում ժողովրդին մէջ: Այդ երգերին տներ էի ա-
ւելցնում եւ գրում էի զանազան ոտանաւորներ — երգիծական,
հայրենասիրական եւ սիրային... մէկը գրած 1881 կամ 1882
քւին... իմ տպած ոտանաւորների մէջ ամենավաղ գործը *Շունն
ու կատուն* է որ գրել եմ 1886 քւին»¹⁰:

ԳՆԱՐԵՐԳԱԿԱՆ ֆերքուածները ընդհանրապէս կը վերաբե-
րին երիտասարդ շրջանին 1887 — 1895. ցանցառ'այդ քուականէն
վերջ: Յիշեմք հոս *Ամառնային դիշերը դիւղում* (իբ Դսեղ գիւ-
ղի նկարագիրը) 1887-ին, *Ես նայում եմ, Երանութիւն էր խոս-
տացել, Ներքի՛ր, ո՛վ կոյս՝* 1889, *Այդ Ի՛նչ սրտամաշ* (հայրենիքին
ուղղուած), *Պանդուխտն երգեց, Եթէ իմ վերջին, Գիշերային
ստաջին աստղի դիմաց, Մարդարէ՛* 1890. եւ բոլորն ալ նոյն
քուականին Մոսկուա հրտ. *Բանաստեղծութիւններ* տետրէն:

Դաշնակներ-էն զոր հրատարակեց նա Թիֆլիս 1896-ին, կը
նշանակենք՝ *Հին օրհնութիւն, Գութանի երգ՝* 1887, *Համերգ, Գի-
շերային մտորմունք* (Աստղերի հետ) 1890, *Վատ օրեր, Տենչ,
Մուցած սէր, Իմ սէրը, Արտասուքներ, Իմ երգը* (Ինձ մի՛
խնդրիր) 1892, *Երկինք երկիր, Նմանութիւն* եւն. 1894:

Յաջորդ շրջանին իբ միւս հրատարակութիւններէն կը յի-
շեմք արուեստի եւ գաղափարի հասուն երգեր՝ *Անդարձ ճամ-
բորդներ՝* 1897, *Խորհրդաւոր մեռելը, Դու քու ճամփէն, Պան-
դուխտ եմ քոյրիկ, Հայոց լեռներում, Տրտունջ՝* 1902, *Հայոց
Վիշտը անհուն մի ծով՝* 1903, *Վայրէջք՝* 1909-ին գրուած Մե-
տիսի բանտին մէջ: *Հայրենիքիս հետ՝* 1915 եւ *Հողհանդիստ՝*
1916 երկուքն ալ խոր զգացումով եւ արուեստի կատարելութեամբ:

¹⁰ Տե՛ս *Ինքնակենսագրութիւնը «Ընտիր Հատուածներ»* եւն.:

Հուսկ Վրաստանի համար՝ 1916, Իմ երգը՝ 1918: Համագումար 70-ի չափ եմ իր այս երգերը. ունի նաեւ շուրջ 20 Մանկական բանաստեղծութիւններ:

ԴԱՌԵԱԿՆԵՐԸ շուրջ 70 հատ՝ գրերէ ամբողջութեամբ 1916-1922-ի շրջանէն եմ:

ԼԵԳԵՆՏ - ԲԱԼԼԱԴ - ԱՌԱԿ - ԱՌԱՍՊԵԼ շարքը՝ բոլոր 20 է, Շունն ու կատուն՝ 1886, Անբախտ վաճառականներ՝ 1886(°), Ախթամար՝ 1891, Անիծած հարսը՝ 1898, Արծիւն ու կաղնին՝ 1898, Պօղոս-Պետրոս՝ 1898, Փարւսնա՝ 1902, Լուսաւորչի կանթեղը՝ 1902, Հսկան (Կովկասեան առասպել - հատուած)՝ 1908, Արտուտի երգը՝ 1908, Զարի վերջը՝ 1908, Էսպէս չի մնայ՝ 1908, Մի կաթիլ մեղրը՝ հէֆեաք գրուած 1909-ին Մետեխի բանտին մէջ. Ազաւնու վանքը՝ 1912, Աղջկայ սիրտը՝ 1913, Յաղիկներէ երգը՝ 1913, Քաջ Կիւիւր՝ 1914, Մոծակն ու մըջիւնը՝ 1916, Թաղաւորն ու չարչին (Ջուղայի գաղութի մասին)՝ 1917, Անբուն կկուն՝ 1922. որոնց վրայ աւելցնելու է նախնական շրջանէն՝ սկսնակ գործեր, որոնք քիչ կ'երեւան Թ.ի հետեւորդ հրատարակութիւններուն մէջ, ինչպէս Արեւ եւ Լուսին՝ 1887, Նահատակ՝ 1888, Ալէք՝ 1889, Մեհրի՝ 1890:

ՎԻՊԱԿԱՆ - ԴԻԻՅԱԶՆԵՐԴԱԿԱՆ երգերու կամ ՊՕԷՄՆԵՐՈՒ հնագոյնը Մարօն է՝ 1887-ին. ու կարգաւ կը հետեւին Լօռեցի Սաքօն՝ 1889, Հառաչանք (անաւարտ)՝ 1890, Դէպի անհուն՝ 1894, Պօէտն ու Մուսան՝ 1901, Անուշ՝ 1901-1902, Թմկաբերդի առումը՝ 1902, Սասունցի Դաւիթը՝ 1902 եւ աւելի ուշ Հաղարան բլրուրը (անաւարտ)՝ 1914-ին: Ասոնց կարգին պէտք է հաշուել նաեւ Հին կուրը եւ Երկրում, երկուքն ալ անքուական են, որոնք դժբախտաբար չեն տեսնուիր վերջին հրատարակութիւններուն մէջ:

ԱՆՏԻՊ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ շարք մ'ալ կայ գոր կը հրատարակէ Զաքեմց՝ Թումանեանի «Դեղարեւստական երկեր»

հատորին մէջ (Երեսան, Պետիր. 1934, մեծադիր, երկսիւն, էջ 370), ուր կը տեսնենք բացի բուն անտիպներէ՝ մուրհաւած իր հարազատներուն եւն. փոփոխակներ եւ կամ նախափորձեր Ա-Նուշ, Սասունցի Դաւիթ, Հառաջանք, եւ Հազարան բլրուլ գործերուն, եւ հուսկ քանի մը սիրուն քառասկներ:

ԶԱՓԱԾՈՅ ԳԵՆԵՏՈՆՆԵՐԸ 10 հատ են, «Հայի զարմանքը - Հայի տրտունջը - Հայի ցաւը - Գրականական մազանդա - Վայր ընկնող աստղեր - Կտակ - Ազնիւ տիկնայք, ջահել հիւրեր - գրուած 1897-1901-ի շրջանին. իսկ Հեռանքն առած պատգամ ու թուղթ՝ 1905, Պարոզիա (Յ. Յովհաննիսեանի «Իմ հայրենիք տեսնուի ես, ասա՛» քերթուածին) 1910, Զեռայ՝ 1915:

ՊԱՏՄՈՒԱԾՐՆԵՐ-էն կը գտնենք շուրջ 14 հատ՝ Զարեանցի հրատարակութեան մէջ՝ որ եղածներէն ամէնէն ընդարձակ ու մոխն է, քէն քանի մը կարեւոր քերթուածներ հոն կը պակսին:

ՀԵՔԵԱԾՆԵՐՈՒ քաժինը ա՛լ աւելի մոխն է: Հրատարակուած են (խմբ. Զարեանցի) 21 հատ Հայ ժողովրդականներէն, որոնց մէջ կը բովանդակուին «Բաջ Նազարը» եւ ուրիշ երկարաշունչներ, ինչպէս համով հոտով՝ Գառնիկ ախպէր - Ծխոր - Տէրն ու Ծառան - Կոնատ աղջիկը - Եղեմական ծաղիկը, եւ ուրիշներ: Թարգմանածները առնուած են հնդիկ-նախին-խրկանտական-գերմանական-իտալական-ռուսականներէն:

Կը տեղեկանանք քէ «1894 Իւրից սկսած Թ.ի ժողոված հեքիաթների վարիանտները [փոփոխակ] հասնում են մօտ յիսունի: Եւ դեռ շարունակում էր հաւաքել»¹¹:

Թումանեանի գործերուն որպէս յաւելուած պէտք է նկատել Բարգմանութեան քաժինը միջազգային գրականութեան ընտիր

¹¹ ՏԵՍ՝ Յովհ. Թումանեանի «Երկերի ժողովածու» ժող. հրատ. Երեսան, 1926, Յառաջարան (Կենսագր.) էջ Դ.:

գործերէն, ինչպէս, օր. Լորտ Պայրընէն՝ Շիլիոնի կալանաւորը. Լոնկֆելլոյէն՝ Հալաւթի երգը եւ խաղաղութեան չիբուխը. Ա.տը Միւսէէն՝ Լիւսին. Գէօքէէն՝ Լերանց շարքերը, Վարդը, Մաղիկները. Պուշկինէն՝ Օլեզի երգը, Ջրահեղձը, Ձմեռուան իրիկուն: Դարձեալ կտորներ Ֆերդուսիէն, Հայնէէն, Հուդէն, Շիլլերէն, Ա. Բլոկէն, Ի. Ճաւնաւաճէն, Միցկեւիչէն, Ժուկովսկիէն, Հիմենսէն, Նեկրասովէն, Լերմոնտովէն, եւն:

Հուսկ ընդարձակ հատուածներ Ռուս եւ Սերպ ժողովրդական դիւցազնավէպերէն (*Սեւագորը - Մուրոմցի Իլյան կուռմ է Վլադիմիր իշխանի հետ - Թէ ինչ ուզարկեց Թուրքի սուլթանը Մոսկուայի ցարի ընծաների փոխարէն - Մարկոն ռամազանին զինի է խմուժ*) եւն.:

Եւ հուսկ *Մանկական* սիրուն բանաստեղծութիւններու շարք մը՝ գերմանական-անգլիական եւ արեւելեան գրականութեան: Ահա ամփոփ պատկերը Թ.ի գրական գործերուն:

Թումանեան եղած է, ինչպէս ինք կ'ըսէ, մէկը մեր խանգարուած գրողներէն: Ստուգիւ երեսնիկգամեայ շրջանին (1887 - 1922) համեմատաբար գրական չափաւոր արտադրութիւն մը քողած է մեզի: Իր կեանքի մեծ մասը կողմնակի աշխատութիւններ եւ ընկերական հարցերն են զինքը գրաւած. եւ գրածներն ալ աննպաստ պայմաններու մէջ, ինչպէս ինք կ'ըսէ՝ գրած «միշտ ոտի վրայ, կամ աւելի շատ՝ հիւանդ ժամանակը»: 1901-1902-ին հիւանդութեան եւ յոգնածութեան տարիներուն բախտ կ'ունենայ ամառներն ու աշունը Ապստոման անցընել. եւ հոն է որ կ'աւարտէ իր լաւագոյն երկերը՝ *Սասունցի Դաւիթը - Թմկարեւդի առումը - Փարւսնա*, շարք մը լեզբեղներ: Դարձեալ հոն է որ կը վերամշակէ կամ կը բարեփոխէ *Անուշը* (սկսուած 1890-ին) մօտէն ծանօթանալով ժողովրդական երգերուն:

Վերջին տարիներուն՝ քէեւ բազմագրադ եւ «խանգարուած» ազգային խռովայոյզ կեանքէն, նա կը պարապէր Հայ ժողովրդական դիւցազնեագութեան վրայ՝ ուսումնասիրելով եւ մշակելով

Սասունցի Դաւիթի երկրորդ մասը¹²։ Կը հաւաքէր հեքեաքներ եւ լեզեղներ՝ մանկական գրականութեան համար, մշակելով միանգամայն՝ յատկապէս բոյսերու եւ անասուններու կեանքէն՝ «Ծաղիկներէ երգը» եւ «Զարի վերջը» եւն.։

Նիւր մը սակայն որուն վրայ կեդրոնացուցած էր իր ուժը «Հազարան բլրուէ»ն էր, իրեն այնքան սիրելի, եւ որ, իր կարծիքով, իր գլուխ-գործոցը պիտի ըլլար։ Սակայն դժբախտաբար աւալ մնաց անաւարտ։

ՆԻԻԹ-ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

Թ.Ի ԲԱՆԻ ՄԸ ԿԱՐԵՒՈՐ ԳՈՐԾԵՐՈՒՆ

ՄԱՐՕՆ, վիպերգ գիւղական կեանքէ, սեւ պատկերն է քըշուառ ամուսնութեան մը իննամեայ մատաղատի աղջկան մը՝ հըսկայ հովիւի մը հետ, որմէ զգուած Մարօ կը փախչի ծնողաց քով։ Ասոնք անկարեկիւր զինքը կը հալածեն ու կը բռնադատեն իր երկան դառնալու։ Մարօ յուսակտուր՝ անձնասպան կ'ըլլայ։

Մարօն, սկսնակ Թ.Ի գործ, մեծ արժէք չի ներկայացներ։ Բարոյական տեսակետով դատապարտութիւնն է այն անխիղճ ծնողներուն՝ որոնք շահու համար եւ կամ ուրիշ յոռի նպատակով՝ քշուառ ամուսնութեան կը դատապարտեն իրենց զաւակները։

ԼՕՌԵՑԻ ՍԱՔՕՆ, վիպերգ, հսկայ հովիւ մըն է, որ դներու եւ «Հարկեր»ու ահաւոր ցնորհներով հալածուած՝ խելագար կը փախչի գիշերանց Լօռի ձորերը եւ կ'անյայտանայ խաւարի մէջ։

¹² Կը համարենք թէ նոյնն ըլլայ Սիրունիի ակնարկածը, թէ ինչպէս Թ. 1921-ին Կ. Պոլսի մէջ իրեն «Կը խօսէր զիւցազներդութեան մը մասին՝ որ պիտի դար ստուերի մէջ ձգելու իր Սասունցի Դաւիթը»։ Ու դարձեալ թէ Թ. Կովկասէն պիտի հասցընէր «Սասունցի Դաւիթի մասին ուսումնասիրութիւն մը... որ պիտի դար, կ'ըսէր, նոր յայտնութիւններ բերելու մեր ցեղին աւանդութեանց ու զրոյցներուն շուրջ»։ (Տե՛ս վերեւ յիշուած յօդուածը «Նաւասարդ»ի մէջ)։

Ասիկա եւս սկսնակ թումանեանի գործ է. պատմութեան ձգագում, Սաֆոյի տնն ու սարսափն ալ ոչ բնական, քանի որ նա հսկայ մարդ, ապրած սար ու ձոր, վարժ պիտի ըլլար ամէն արհաւիրքի:

ԴԷՊՐ ԱՆՀՈՒՆԸ փորձն է վերլուծման կեանքի եւ Մահուան խորհուրդներուն, ուր կարծես Թ. խառնած է իրականութիւն ու երազ: Նա կ'որոնէ յաւիտեականութիւնը, տեղեւորով հոն անմահորէն ձուլուիլ իր սիրած էակին հետ:

Այս գործը, ինչպէս կ'ըսէ Լ. Մանուէլեան¹³, իր վիպերգական ոգով կը յիշեցնէ ռուս բանաստեղծ ժուկովսկիի *Течен и Эсхин* (Թէոն եւ Եսփին) քերականը:

ՊՕԷՏԸ ՈՒ ՄՈՒՍԱՆ Թ.ի կեանքի դրուագները կը ներկայացնէ, ուր նա տարուած Մուսայէն՝ կը ձախողի գործնական կեանքի ասպարեզին մէջ: Ու կը հեզնէ հոն իր ժամանակին տգէտ խմբագիրներ, (*Մուրճի* խմբագիրը՝ որ շատ լուրջ չգրունելով *Շունն ու կատուն*՝ մերժած էր հրատարակել գայն), անձեռնհաս գործիչներ, հայ գիրն ու գրագէտը արհամարհող հարուստ *աղանկեր* (Մանքաշեան), քրու քննադատներ (Լէօ) եւն.: Այս գործին հոգեբանութեամբ գրուած երգիծականներ են նաեւ *Չափածոյ Ֆելլիստոնէր*—ը: Այդ բոլորին մէջ ալ մարտար երգիծարան է թումանեան, եւ կը ծաղրէ առանց վիրաւորելու:

ՀԱՉԱՐԱՆ ԲԼԲՈՒԼԸ վիպական հիւսուածքով իմաստասիրական որոնում մըն է Թ.ի քով՝ չարի ծագման եւ անոր գործած անբերին դէմ դարմանին¹⁴: Հիմնական գծով հոն կը գործեն քաղաւոր մը եւ իր երեք գաւակները, որոնք իրենց հօր հրամանով

¹³ Տե՛ս «Ռուսահայ դրականութեան պատմութիւն» հտ. Դ. էջ 77-79. տպ. Ալեքսանդրապոլ, 1909:

¹⁴ Ուրիշներու քով, ինչպէս Յարութիւն Թումանեանի (տե՛ս «Հաղ. Բլբուլ» թատերգ. տպ. Թիֆլիս 1902) չքնաղ պալատի

կը շրջին աշխարհ Հազարան առիակին ի խնդիր: Անոնցմէ փոքրիկն է՝ որ՝ հնազանդ խորհրդաւոր պատգամի մը քելադրութիւններուն՝ կը յաջողի գտնել զարմանալի քոչունը, կրելով անքիւ հալածանք ու նեղութիւն:

Թ. այս գործին մէջ՝ որ կիսկատար, մնաց իր մահով, հոգեբանական, եւ ընդհանուր տիեզերաբանական հարցերու ֆննուքեամբ կը դեգերի՝ գործածելով իր բովանդակ հատուրիւնը մարդկային իմաստասիրութեան:

Հին Կոիտէ սրտագրաւ դրուագ մըն է հայրենասիրական, ուր Թ. իր ստեղծած վահանի եւ ընկերներու տիպարով կ'ուզէ ազգային ազատութեան համար զոհաբերութեան հոգի ներշնչել մեր նոր սերունդներուն:

Իր խորքին մէջ՝ Հին Կոիտէ մեզի կը յիշեցնէ Բափֆիի «Խենքը»:

ԵՐԿՐՈՒՄ-ը պատկեր մըն է մեր քրքահայ եղբայրներու կրած դարաւոր տառապանքին՝ ֆիւրտ-քուրֆ անարգ բռնաբարութեան, որուն դէմ կը ծառացնէ Թ. Կովկասահայ նուիրուած եղբայրներ՝ որոնք կը փութան փրկութեան ժամն հնչեցնել:

ԱՆՈՒՇ-ը դրուագ մըն է հայ գիւղական կեանքին. ողբերգութիւնը սիրահար զոյգի մը, Անուշի եւ Սարոյի: Անուշի եղբայրը իր պատուին մէջ վիրաւորուած ու ամօքահար՝ ֆանի որ Սարոյ տմարդօրէն զինքը չարաչար գետին տապալած էր ընկերական ճեղով սարքուած գոտեմարտի մէջ, վրէժ կը լուծէ սպաննելով իր քրոջ սիրահարը:

Մը շինութեան հարցն է՝ ուր կը պակսի Հ. Բ. ը, որու երգը զօրութիւնն ունի ծերը մանկացնելու, մեռելներուն յարութիւն տալու եւն.:

Այլուր (տե՛ս օր. Սուրբաթեանի «Գրական զոհարներ» եւն.) պալատի տեղ՝ եկեղեցի է, որուն կը պակսի Հ. Բ. ը եւն.:

Անուշ-ը Թ-ի գլուխ գործոցն է որպէս յաջող վիպերգ՝ ար-
ուեստի գծերով եւ զանազանութեամբ, Լօռիի խրոխտ եւ հարուստ
բնութեան տեսարաններով, գիւղական կեանքի ապրումով:

Տեղւոյն բնութեան, բարբերուն, մտայնութեան ուսումնա-
սիրութեան գատ Թ-ի աղբիւր եւ ներշնչում եղած է Պ. Պոռ-
շեանցի «Համբարձման տօնը» (Սօս եւ Վարդիթեր վէպին մէջ):

ԹՄԿԱՐԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ վիպերգ մը քերես Անուշէն ալ
յաջող, բայց իր խորքին մէջ աւելի տխուր:

Թմուկ բերդի հերոս Թաքուլ իշխանի տիկինը՝ հրապուր-
ուած Նադիր շահի կեղծ խոստումներէն՝ կը մատնէ բերդը նոյն
շահին՝ որ ամէն ինչ աւերելէն յետոյ նոյն մատնիչ տիկինն ալ
չարամահ կ'ընէ:

Թ. արուեստի կատարելութեան գատ բարձր բարոյական մը
դրած է հոն. մատուցեալ չարիքը, եւ չարագործին պատիժը,
եւ քէ բարի գործն է անմահ՝ որ կ'անմահացնէ զայն գործողը:

Թումանեան հոս ներշնչուած կը տեսնուի Պատկանեանի «Քեօ-
րողուն»էն՝ Թաքուլ խիզախ եւ յաղթող իշխանին նկարագրին մէջ:

ՍՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹԸ հայ ժողովրդական «Ջոջանց տուն»
կամ լաւ եւս «Սասնայ ծռեր» դիւցազնավէպի մէկ դրուագին
նարտար ու գեղարուեստական մշակումն է Թ-ի կողմէն:

Շուրջ էսան դար ապրող այդ վէպը սփանչելի տարբեր ունի
իր մէջ, բայց հազիւ 60-70 տարի առաջ է որ գրի առնուած է հայ
ժողովրդեան բերնէն եւ ուսումնասիրուած՝ Գարեգին Նպս. Սըր-
ուանձտեանցէ, Գ. Խալաթեանէ, Ս. Կանայեանէ, Լէօե՛ եւ մանա-
ւանդ Մ. Արեղեանէ որ մինչեւ 40 փոփոխակ կը հաշուէ:

Այդ հուսմ ու հարուստ նիւթը մշակել փորձած են Թ-է գատ
նաեւ Լ. Մանուէլեան, եւ իստեակեան: Թ-ինը գերազանց կը մնայ:

Ահա դրուագին բովանդակութիւնը: Դիւցազուն Առիւծ Մհերը
ինքնիշխան եւ յաղթող տէր Սասունի, կը մեռնի քողով զաւակ
մը Դաւիթ անուն: Նգիպտացիք օգտուելով երկրին անիշխան դիր-
քէն՝ կ'արշաւեն Սասունն եւ հարկի տակ կը ճնշեն զանկա:

Դաւիթ մեծնալով՝ գիտակից իր ուժին եւ նախանձախնդիր իր հայրերու երկրին ազատութեան՝ կը սկսի հալածել քշմամբները եւ հոսակ մեմամարտի մէջ սպաննելով անոնց հսկայ Մարամելիք քազաւորը՝ կ'ազատէ երկիրը բռնութենէ:

Որպէս դիւցազնավեպ ունի իր մէջ զարմանալին ու հրաշալին. հարուստ ժողովրդական տարրերով, կրօնական շունչով եւ հինօրեայ աւանդութիւններով: Համառօտ համեմատութիւն մը աղբիւրին եւ այս վերամշակումին՝ պիտի ցուցնէ քէ շատ տեղ հետեւած է թուամանան աղբիւրին լայն հպումներով, լեզուն յղկելով ու արդիացնելով, այլուր ընդարձակելով երբ կարելի էր առանց բնագրին վնասելու, ինչպէս է Դաւիթի եւ Մարամելիքի մեմամարտութիւնը, բնագրին մէջ սլարգ ու համառօտ, իսկ Թ.ի քով ընդարձակ ու յաջող:

Մեր աշխատութիւնը չնրելով երկար դրուագներու մէջբերումի եւ բաղդատութեան, կը բաւականանա՞նք գէշ երկու փոքր հատուած գետեղի կոս բնագրէն՝ մոկաց բարբառով, ուր ընքերքողը պիտի կարենայ աղօտ գաղափար մը կազմել բնագրին եւ Թ.ի վերամշակումին եւ ըստ այնմ գնահատել մեր բանաստեղծին արուեստը:

Պատառիկ «ԴԱՒԻԹ ԵՒ ՄՀԵՐ»էն պատմուած Մովսէսի Նախֆեռիւն. գրի առնուած Մանուկ Աբեղեանէ 1886-ին¹⁵:

Ձէնով Յովհան օգնութեան կ'երբայ Դաւիթի՝ որ անոր խրատով կ'ելլէ հորէն: (Հմտ. Թուամանեանի «Սասունցի Դաւիթը» Գրական Յովեք, ք. 8, էջ 78-79 (ԻԴ).)

Ձէնով Յովհան էլաւ, Սեւ ձին խեծաւ,

Ու Եզիր զանգուն՝

Չուր մէկ էլ ոտ չուռ էտուր մէկ էլ զանգուն -

¹⁵ Տե՛ս Մ. Արեղեանի խմբ. հրտ. պատկառելի գործը «Սասունցի Դաւիթ», Պետհր. երեսան, 1936 (էջ 1128) էջ 28-29 եւ 31:

Սեւ ձին խրեղէն էր —

էլաւ, լեռայ սարի գլոխ կայնաւ:

Գուռկիկ Զաւալին Զէնով Յովան տեսաւ,

Խրխնջալաւ եկաւ մօտ:

Զէնով Յովան վախացաւ. ասաց.

— Դաւիթ սպանած է, ձին վախի, էկի էստէխ:

Զէնով Յովան կանչեց —

Զէն ընկաւ սար ու ձոր —

Ասաց. — Դաւիթ, յո՞ւստն իս,

Եիշա՛ Մարութայ Բանձր Աստուարածին,

Խաչ Պատարագին, ինչ վար քեօ աջ թեւին:

Կանչեց, ձէն ընկաւ Դաւթի ականջ: —

Չասեա՛ Դաւիթ տղայ էր,

Զիտէր էնու զօրութուն: —

Դաւիթ լսաւ, կանչեց, ասաց.

«Եա՛ Մարութայ Բանձր Աստուարածին,

Խաչ Պատարագին, ինչ վար իմ աջ թեւին»:

Ասաց, դիւր ըմ դինք թափ էտուր.

Ասծով գինջլի կտորքներ երկնուց էկան տակ:

Դաւիթ էլաւ թռաւ խորու բերան.

Մեհամարտ. Դաւիթ կը սպաննէ Մարամիլիքը (Մ. Արեղեան, էջ 31) Գրական Յոլիքը, հտ. 8, էջ 81-82.

Դաւիթ դնաց, էկաւ,

Ասծու անուն էտու,

Եիշեց զՄարութայ Բանձրիկ Աստուարածին,

Խաչ Պատարագին, ինչ վար ուր աջ թեւին,

Զուր մէկ դորդ էգար:

Վոր էգար, Ասծու հրամանքիւ,

Զքառսուն դոմշու կաշին կտրեց,

Քառսուն ջաղցի քար լէ կտրեց

Մարամէլքի զլխու զաղաթ լէ կտրեց:

Մարամէլքի կանչեց, ասաց.

— Դաւիթ, կեօ ես տէլ էստէխն եմ:

Դաւիթ ասաց. Մարամէլքի, քե թա՛փ տուր մէկ:

Ինչ Մարամէլքի զինք թափ էտուր,

Մէկ կտոր ընկաւ էստէխ, մէկ էնտէխ:

8. ԹՈՒՄԱՆԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Տեսանք քէ Թ. դեռ 11-12 տարեկան՝ զգալով իր կոչումը, կ'ըսէ. «Քընարն առայ — Պօէտ դառայ» («Պօէտն ու Մուսան»)¹⁶. Եւ քէ ինք այդ կոչման սահմանում է երկնփէն (Քառեակ).

«Ու կնքողըս նա ինքն եղաւ որ սահմանեց ինձ պօէտ»:

Ու գիւղին մէջ ապրած իր զգայուն հոգին տպաւորուեցաւ Լօռիի գեղեցիկ ու վայրագօրէն վսեմ բնութեան՝ որ այնքան հարուստ է հսկայ լեռներով, ձորերով, անտառներով, ծաղկներով ու ջրը-վէծներով: Յետոյ այն ամէն քան զոր տուած էր իրեն ժողո-վուրդը իր նահապետական գիւղով՝ իբր ապրում, նիստուկաց, բարբեր, աւանդութիւն, զրոյց, հէքեաք, վերջապէս նոյնիսկ ցնորքն ու նանրահատութիւնը, բոլորն ալ որպէս ազգագրա-կան հարուստ նիւք, կենսաւորեց նա իր քերքումներով: «Ժո-ղովուրդ եւ բնութիւն կը կազմեն անոր գլխաւոր զարկերակը. զաղափարներու ձուլաբանը, պատկերներու եւ լեզուի ներշնչաբանը»¹⁶: Արուեստի ըմբռնումն եւ յարատեւ զարգացումը իրեն տուին գրչի վարպետները, «ժրքեւ բնիկ Կովկասցի ու լեռնցի, կ'ըսէ Թ., ես սիրում եմ Պուշկինի ու Լերմոնտովի այդ երգերն ու պոէմները... Թէպէտ լեռների սէրն ու լեռնային կեանքի քաշիծը, առանց այն էլ, յատուկ են իմ հոգուն, բայց ռուս բանաստեղծները տուին ինձ պոէմի նոյնիսկ ձեւը, ինչ-

¹⁶ Հ. Սահակ Կոզեան. «Յովհ. Թումանեան» բանասիրտ. «Հ. Ամս.» 1923, էջ 270:

պիսին կրում են իմ գրաւածքներից շատերը, — որովհետեւ մեր գրականութեան մէջ առաջ այդպիսի պոէմներ ամենեւին չկային»¹⁷: Եւ այլուր «... Բայց, հէնց որ ծանօթացել եմ եւրոպական բանաստեղծներին եւ աւելի լայն գրականութեան հետ, այն օրուանից ինձ համար ամենասիրելին մնում է Շէֆսպիրը»¹⁸:

Աւելցնեմք նաեւ՝ քէ Թ.ի մեծագոյն մէկ վարպետն ալ եղաւ Սայաք Նովա՝ քնարականին մէջ, մանաւանդ «*Քառեակներուն*»:

Թ.ի գրականութեան ուժն ու գաղտնիքը *ձեռն* է ամբողջ. եւ ինք հոն նարտար *պատմող*¹⁹ մըն է, որ կը պատմէ առասպել քէ իրականութիւն՝ համեմատ միշտ բնութեան եւ իր գիւղի բոյրերով ու բոյրերով. իսկապէս «գիւղագիր պօէտ»:

Թ. յամառ աշխատանքով մըն էր որ ոտն առ ոտն բարձրացաւ արուեստի կատարելութեան՝ յղկելով միշտ ու գեղեցկացնելով իր գործերը. եւ իրաւամբ կ'ըսէ Մակիեցեան քէ «1890 թւի *Լօռեցի Սաքօն*, 1892 թւի *Անուշը* ուղղակի անընթեռնելի են: Մինչդեռ 1903-ի հրտ. մէջ *Անուշը* դառնում է մեր պօէտի լաւագոյն պօէմներից մէկը»²⁰: Նոյնը պէտք է ըսել մասամբ *Սասունցի Դաւիթի* եւ ուրիշ քերթուածներու մասին ալ:

Նկատել ի՞նչ բնական ու ցայտուն պատկերներ օր. *Անուշի* մէջ՝ բնութեան տեսիլներ, հօրն ու մօրը անէծքը, գօտեմարտը, գոհը՝ փախստական Սարոյ՝ որու

«Օրհասն առաջին, զնգական ետեւից

Հանգերը դըժուրք, ընկերը դուշման»...

ու մարդասպանը դաժան

«Սարսափ է կաթում արնոտ աչքերից»:

¹⁷ «Ընտիր հատուածներ» ԷԼՆ. Բ. Հտ. էջ 399 (Թիֆլիս, 1899):

¹⁸ «Ընտիր հատուածներ» ԷԼՆ. Ա. Հտ. էջ 265 ԷԼՆ.:

¹⁹, ²⁰ ՏԷՍ «Ընտիր հատուածներ» (Երեւան, 1929), էջ 10-11:

Ո՛րքան ներքահիւս պատկեր ողբը որդեկորոյս մօր․

«Իմ օր ու արեւ, կեանք ու ջան որդի․․․

Կարմիր արեւից․․․ կանանչ տերեւից ընկած Սարօ ջան»․․․

Հովուերգական շնորհիֆով գեղուն եմ անդին, առասպելը լալ-կան ուռիին՝ որ գոհար մըն է, ջրկիր աղջիկներու դրուագը, Համբարձման պարերգը, ու ողբական պատկերը Սարոյի գերեզմանին համար․

«Ծառ ու ծաղիկ սըւսըւալով - Բոյր խնկեցին դերեկան»։

Նարեկեան տաղեր չի՞ յիշեցներ հետեւեալ քնարականը․

«Երկար երկար ման եկայ - Ոտքով, մտքով ես կեանքում,

Երկու երկու բան դըտայ - Ծանր ու դժար էս կեանքում»։

Կամ Սայաթ Նովան՝ հետեւեալ անտիպը երաժշտական․

Կ'անցնին օրերն, Անուշ ջան - Կ'անցնի քո հէրն, Անուշ ջան․․․

Ու կը տանի իրեն հետ - Իր ցաւն ու սէրն Անուշ ջան․․․»
Տեսնել Ախթամարը - որու նիւթը մատակարարած է փրուսեան վարժապետը - եւ մամր քերքումս, ինչպէս սիրուն «Ինձ մի՛ խնդրի» եւն։

Գեղեցկութեան շնորհիֆով լի եւ վսեմութեամբ քախժալի՝ Հայու վիշտը, Հայրենիքիս հետ եւ մանաւանդ Հոգեհանգիստը։

Քառեակներուն մէջ Թ․ կը հասնի արուեստի մեծ ներութեան եւ քարճրութեան, իւրացնելով տխուր եւ զգայուն խորութիւնը Սայաթ Նովայի՝ գոր շատ ուսումնասիրեց եւ երգեց անոր նման․

«Առտ, անհատ Աստուծո՛ւ նըման միշտ տեղալուց յողնել եմ ես․

Հողիս ծարաւ՝ սըրան-նըրան մըտիկ տալուց յողնել եմ ես․

Մինը պիտի դար իմ դէմը՝ ճոխ ու շրտալ անհաշիւ,

Ամեն ճամբում ըսպասելուց ու փընտրելուց յողնել եմ ես»։

Թ․ի գիտաւոր արուեստն է որ կը ստեղծէ արձագանքը Անուշի՝ վուշ, վուշ․ ինչպէս գալարումը գետին՝ վաշ-վիշ․ եւ կրկնաձայներ ժողովրդական բերնէն՝ ախով-վախով, բախտով - Թախտով, խախան-խոպան, լաշին-նաշին, ձոր ու ծապան, քար ու կապան եւն։

Հետեւած Ղ. Աղայեանի՝ վերացուց բարձրացուց Հայ ժողովրդական գիւցաղնալէսը եւ անոր շնորհալի ձեւ մը տուաւ. ու Մանկական գրականութեան մէջ ստեղծեց աշխարհի մը դիւրակամ ու հրապուրիչ, որու ցայտուն օրինակն է «Շունն ու կատուն» գոր Ղ. Աղայեան իրաւամբ կը կոչէ «տաղանդաւոր գրոյց... գերազանցօրէն յաջող իր տեսակին մէջ»²¹, ինչպէս իւր միւս «առակները գոհար»՝ «Անբախտ վաճառականներ, Արծիւն ու Կաղնիք» եւն.:

Եւ արուեստագէտ Թումանեանը շատ ներշնչեց. Կովկասահայ գրագէտներէն իր տաղանդաւոր աշակերտներն եղան վարժապետին կնիքով՝ Իսահակեան, ժողովրդական բանաստեղծութեան մէջ եւ քնարեղութեան մէջ Տէրեան եւ մանաւանդ Զաքեան: Սայաթ Նովայի արուեստին հրապոյրով: Եւ իսկապէս տաղանդաւոր Տէրեան մեծապէս գնահատեց այդ վարպետը, շեշտելով քէ «իսկական գեղարուեստը համամարդկային է»: Եւ քէ այդպիսի ըլլալով օր. *Փարսան»*՝ «բոլոր ժողովուրդների համար հասկանալի է եւ գեղեցիկ, ինչպէս Պուշկինի Ոսկէ ձկնիկը»²². Եւ ատոր համար իսկ՝ ծառացած Թ.ի ք-քու քննադատներուն դէմ՝ երգեց անողոք²³.

«Թումանեանի երգերում — կայ եւ «էն» եւ «էս»,

Բայց կայ եւ սիրտ դեղերուն — Հողի հրակէզ.

Եւ Լէւի՛ եկ, ո՛վ նենգամիտ — Այնտեղ փնտռիր միշտ

Հայրենի խնդ ու ժրպիտ — Եւ հայրենի վիշտ»:

²¹ Տե՛ս «Հայ գրողներ» Կենսագր. էջ 676-9. (տպ. Թիֆլիս, 1909):

²² Տե՛ս «Երկերի ժողովածու» (հրտ. խմբ. Պ. Մակինցեանի) Պետհր. Երեւան, հտ. Դ. «Հայ գրականութեան զարիւր օրը», էջ 185. ուր կանխաւ Տէրեան խորիտ յայտարարութեամբ կ'ըսէ. «Թումանեանի մի փարսանան ես չեմ փոխի պոլսահայ յանկարծակի հեթանոսացած պօէտների արտագրութեանց հետ» (էջ 183-4):

²³ Անդ, հտ. Դ. թ. 8 (անվերնագիր), էջ 64:

Ու կը հեզնէ քէ Լէօն է այն քննադատը որ միջակ «Մատուրեանին թումանեանից, Յովհաննէսեանից եւ Խսահակեանից բարձր է դասել...»²⁴։ մինչ ինքը իրաւամբ Պատկանեանէն ալ վեր դասելով գովքը կ'ընէ Յ. Թումանեանի քէ մա «Ստեղծել է իր սեփական երկերը մեր պօեզիայի մէջ։ Նա արդէն վարպետ է ամէն կողմով, մեծ գեղարուեստագետ եւ ժողովրդական հոգու իմաստուն եւ վսեմ քարգման։ Նա կանգնած է իր յատուկ մանապարհի վրայ, որ լի է գեղարուեստական հրաշալիքներով, սակայն մա կը մնայ իրբեւ մի ունիկում [*unicum*] եւ մրա մանապարհը չի լինելու ապագայ հայ պոէզիայի մանապարհը»²⁵։ եւ ատոր համար իսկ արժանի է «Ամեմայն Հայոց բանաստեղծ» տիտղոսին՝ գոր ինքնիրեն տուաւ Թ. պատմական օր մը։

ՏԻՊԱՐՆԵՐԸ գոր թումանեան ստեղծած է իր գործերուն մէջ կարծես միշտ շնոնականներ են, հսկայ, վերխարի. իր բառով՝ ածդահա. այսպէս *Սաբօն*, ու *Կարօն* (Մարոյի մէջ), *Թաթուլ* իշխանը, *Սասունցի Դաւիթ* ու իր ախոյեանը՝ *Մարմահէլք*. եւ դեռ երկրորդական դերով շատ անճանաչուր-իւններ ալ։ Զարմանալին այն է որ Թ. ո'չ իր դիւցազներուն եւ ոչ ո' եւ է տիպարի իր գործերուն մէջ՝ տուած է արտաքին նկարագիր։ Կայ սակայն հոն հոգեկանը, ինչպէս *Դաւիթը*, *Թաթուլը*, *Վահանը* քաջ եւ բարի եւ ազատութեան սիրահար. *Յովհաննէ* ստրկամիտ, *Մարմահէլքը*՝ վատ ու նենգաւոր եւն։

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ մ'ունի սակայն գոր առատօքէն դրած է թումանեան իր գործերուն մէջ, վարդապետական ոն մը ստանճնելով իր *աշուղի* դերով, բարոյական դասեր տալու իր ժողովրդի գաւակներուն. հեզնելով, օր. *Զափածոյ Ֆելլետոններուն* մէջ հայ հասարակութեան մէջ տիրող տխուր հոգեբանութիւնները՝ գրողին, վարիչին, հարուստին եւն։

²⁴, ²⁵ Անդ, էջ 149, 158:

կեանքի հանդէպ լաւատեսը՝ որ կ'երգէ բանտին մէջ իսկ.

«Եւ ես իմաստուն ու բեռն թեթեւ

Անհոգ ծիծաղով — Երգով ու տաղով

Իջնում եմ զըւարթ իմ լերան հոռւ»։ (վայրէջք)

Եւ ապա «վրաստանի բանաստեղծներուն» նուիրածով՝

«Մենք իմաստուն սիրենք, խնդանք — Կեանք էս է ինչ որ կայ».

Ուստի իրաւամբ կ'երգէր Տէրեան Թ.ի մասին.

«Այստեղ միշտ քէֆ ու հանգէս է — Կեցցէ մեր Օհաննէսը»²⁶.
ու աւելի ցայտուն եւ գեղեցիկ.

«Թումանեանի պալատում — Ով որ քէֆի չի նստել,

Նա չէ տեսել դեռ խնդում — Աշխարհ չի տեսել»²⁷.

Թ. Ազատութեան երգիչն է բռնութեան դէմ՝ «Սասունցի Գալիքի» մէջ եւ այլուր, մանաւանդ «Հին կոիւ»ի մէջ՝ վահանեանց բերանը դնելով.

«Ազատութեան որդիքն ենք — Թըռած դէպի սպազան...

Հէյ զալիս ենք, ո՛վ տանջւածներ — Գալիս ենք մենք զինավառ,

Եւ ազատ օր, եւ կեանք եւ սէր — Ողջ բերում ենք ձեզ համար»,

որ Ծ. Կուրդիեանի յեղափոխական երգը կը յիշեցնէ։ Ու այսպէս կը դառնայ նաեւ երգիչը տիեզերական եղբայրութեան բոլոր ժողովուրդներուն՝ դատապարտելով Մսրամբիւիք — Նատրշահ ու նմաններ որ կը քշուառացնեն ընտանիքներն ու անհատը, հեզներով նաեւ բախտախնդիր Քաջ Նազարները որ կը ծիծաղին անմտօրէն ամբոխներու գլուխ անցած։

Եւ անկուսակցական՝ երգեց ցարին ու պոլշեւիկին դէմ.

«Երկու դարի արանքում — Երկու քարի արանքում,

Յողնեւ եմ նոր ընկերի — Ու հին ցարի արանքում»։

Խաղաղարարը տննչալով եղբայրական հաշտ կեանքի.

«Լինէ՛ր հեռու մի անկիւն — Լինէ՛ր մանկան արդար քուն,

Երազի մէջ երջանիկ — Հաշտ ու խաղաղ մարդկութիւն»։

²⁶, ²⁷ Անդ, էջ 56, 57:

Երգիչը տիեզերական վշտի իր «Քառասկ»ներուն մէջ, երգած է որպէս մեծ ազդասէր եւ վիշտը հայուն՝ երկար շարք մը ֆերբուածներու մէջ՝ «Հայոց լեռներում», «Երկրում», «Հին Կուր», «Քաղաքն ու շարժին», «Հողհհանդիսա» եւն. եւ ինչպիսի՝ խորութեամբ.

«Հայոց վիշտը անհուն մի ծով — Խաւար մի ծով ահագին,
Էն սեւ ծովում տառապելով — Լող է տալիս իմ հողին»:

Բայց իր հաւատքը մեծ է դէպի լաւագոյն ապագան հայուն՝ ինչպէս կ'երգէ «Լուսաւորչի կանքեղ»ին մէջ, եւ այլուր.

«Յոյսի՛ հայրենիք — Լոյսի՛ հայրենիք.

Իմ նո՛ր հայրենիք — Հըզօ՛ր հայրենիք» (Հայրենիքիս հետ):

ԿՐՕՆԱԿԱՆ գաղափարներու տեսակետով ինք հեզմած է զինքը «պանքէիստ» կոչողները. «ոչ քէ պանքէիստ՝ այլ պանքոպոմիստ եմ» (ակնարկելով այդ դեղը գոր իրեն կը ներարկէին հիւանդութեան օրերուն): Իր մանկականօրէն պարզ հաւատքը կարելի է տեսնել բոլոր գործերուն մէջ ամէնուրեք, ինչպէս.

«Երբ ես տխուր, յուսահատ — Ինձ կորած եմ համարում...

Եւ զգում եմ, ամեն տեղ — Դուն ինձ հետ ես, Աստուած»:

Ու իր կեանքի վերջալոյսին, 1921-ին, ողբալով որ իր կրցածին չափ արդիւնաւոր չեղաւ մարդկութեան՝ այն տաղանդով գոր Աստուած տուած էր իրեն՝ զինքը պօէտ սահմանելով՝ հառաչեց.

«Ի՛նչքան ծաղիկ պիտի բուսնէր, որ չըբուսաւ էս հողին...

Ի՛նչ պատասխան, ես պիտի տամ հող ու ծաղիկ տըւողին...»

ԼԵՋՈՒՆ Թումանեանի քով կրկին է, ռափիկ բարբառը եւ մաքուր դասական արեւելահայ բարբառը:

Առաջինը գործածած է իր *Ժողովրդական* գործերուն մէջ՝ արձակ քէ ռումաւոր: Եւ հարկ էր այդպէս՝ մնալու համար իրապաշտ, ու բնութեան եւ գիւղի երգիչ, գիւղացիին ուղեղով մտածելու եւ անոր բարբառով խօսելու, ինչպէս լաւ կը դիտէ Վ. Աւարոնեան: Եւ հոտ է մաս մը Թ.ի արուեստի գաղտնիքին եւ դիւքանքին: Եւ ստուգիւ, օր. Ի՛նչ հմայք կը մնայ «Շունն

ու կատուձի մէջ՝ երէ ուզեցի գայն մաքուր լեզուի վերածել: Ըսեմք սակայն թէ այդ իրապաշտական գիտակցութիւնը հետզհետէ կը զարգանայ Թ.ի մէջ: Սկսնակ Թումանեան կը գործածէ *այս ու այն, ծայր ու հայր* եւն. որոնք 1900-էն ասդին է որ կը դառնան՝ *էս ու էն, ծէր ու հէր* եւն.:

Քննութեան կարօտ այս նիւթին շուրջ միայն ըսեմք թէ Լօռիի այդ բարբառը, հարուստ իր ասութիւններով եւ երաժշտութեամբ, խառն զանգուած մըն է հայ-քուրդ-պարսիկ-ֆիւրտ լեզուներուն, որոնցմէ փոխառեալ անծանօթ բառերու դժուարագոյններուն միայն իմաստը տալ փորձեցինք:

Ըսեմք վերջապէս նաեւ թէ Թ.ի քով *ուղղադութիւնն* ալ ռամկական է. այսպէս նա անխտիր կը գործածէ *ճամբայ* եւ *ճամփայ*, *աշխարհք* եւ *աշխարհ*, ինչպէս ռուսահայոց սովոր *արձագանք*, *փթիլ* ձեւերը եւ դեռ շատեր՝ զոր զանց կ'ընենք յիշել:

Դասական *աշխարհարարը* որով Թ. գրած է ընդհանրապէս իր *քնարականները*՝ իսկապէս բարձր է ու բիրեղացման հասած մանուսանդ իր *Քառեակներուն* մէջ, ինչ որ շարունակեցին Տէրեան ու Զարեմց:

ՆԵՐԿԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Յ. Թումանեանի երկերուն նուիրուած ներկայ հաւաքածոն («Գրական Յոլեր», ք. 7,8) կազմած ատեն ջանացած ենք ներքերու ընտրութիւնը կատարել ամոր գրական բոլոր սեռերէն:

Ոտանաւոր երկերու բաժիններուն թէւ հիմ ընտրեցինք Կ. Պոլսի տղ.ը 1922-ին, նկատելով որ, ինչպէս հոն յայտարարուած է, այդ «հաւաքածոն պատրաստած է Պ. Յովհաննէս Թումանեան 1921-ին... կատարած սրբագրութիւններ, կրճատումներ, եւ փոփոխութիւններ». սակայն աչքի առջեւ ունեցանք մեծ Թ.ի գործերուն գլխաւոր տպագրութիւնները 1890էն 1936 լոյս տեսած Մոսկուա-Թիֆլիս-Պարիզ-Երեւան եւն. որոնց հետ համեմատութեամբ սրբագրեցինք հոն սպրդած ոչ-աննշան սխալներ:

Եւ անկցուցինք ամբողջական տողեր իսկ՝ որ փախած էին, օր. «Սասունցի Գաւիթ»-ի եւ «Թմկաբերդի առում»-ին մէջ (տպ. Կ. Պ.) :

Արձակի բաժինը զոր Ա. հատորին մէջ զետեղեցինք («Գրական Յոլփեր» ք. 7) չճանարեռնելու համար Բ.ը (Տ) — առած ենք Ե. Չարեցիի խմբ. հրտ. Յ. Թումանեանի «Գեղարուեստական երկեր» շքեղ եւ համեմատօրէն մոխր հատորէն: Ատկից են եւ ուրիշ հրատարակութիւններէ՝ շատ մը քերթումներ որոնք կը պակսէին Կ. Պոլսի տպ.ին մէջ:

Ողջազրական զանազանութեան մէջ ջանացինք հետեւիլ արեւելահայ ընդհանուր ձեւին. բացառօրէն միայն ու քողով՝ փոխանակ է-ի՝ երբ այդպէս էր օր. հմագոյն տպ.ին մէջ²⁸:

Հ. Ե. ՓԵՂԱԿԵԱՆ

²⁸ Իբրեւ Ուսումնասիրութիւն Թ.Ի Կեանքին ու զործին՝ մեր առջեւ ունեցանք վերեւ յիշուածներէն զատ՝ հետեւեալներն ալ.

— Սուրբաթեան, Գրական գոհարներ, Ա. հտ. Պեռհր. Թիֆլիս, 1922:

— Ա. Զամալեան, Ամենայն Հայոց Բանաստեղծը. «Վէժ» Թ. 1-2, Փարիզ, 1923:

— Աշոտ Յովհաննիսեան. Յ. Թումանեան. «Նորք», Երեւան, 1923, գիրք 2:

— Լէօ, Ռուսահայ գրականութիւն. Վ. Ս. Ղ. 1904, էջ 82-88:

— Փափաղեան. Պատմութիւն Հայոց գրականութեան. Թիֆլիս, 1910, հւն. հւն.:

— Օշական. Յ. Թ. եւ իր գործերը. «Հայրենիք» 1923, օգ.:

— Հ. Սիմոն Երեմեան. Ազգային դէմքեր. հտ. Ը. Վ. Ս. Ղ. 1914, էջ 19-50:

— Յ. Աւագեան. Գրական դէմքեր. Նիւ-Եօրք, 1925, էջ 33:



Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

Լեռնե՛ր, ներշնչւած դարձեալ ձեզանով,
Թընդում է հոգիս աշխուժով լըցւած,
Ու ջերմ ըղձերըս, բախտից հալածւած,
Ձեզ մօտ են քըռչում յախումն երամով:

Ձե՛զ, ձեզ վերքստին, ամպամած լեռներ,
Կեանքի տըխրութեան ամպերի տակից
Ես ձայն եմ տալիս ու ծանրաքալսիծ
Հոգուս ձայները ձեզ քերում նըւէր:

Քեզ մօտ եմ գալիս, իմ հի՛մ տրտմութիւն,
Վեհափառ դայեակ մանուկ օրերիս,
Այնժամ էլ չէիր ինձ հանգիստ տալիս՝
Սըրտիս ականջին խօսելով քազուն...

Ո՛վ, որ կանչում ես գիշեր ու ցերեկ
Հազար ցաւերով, հազար ձեւերով,
Ոգեւորութեան հըգօր քեւերով,
Քեզ մօտ եմ գալիս, հայրենի՛ք իմ հէգ:

Գալիս եմ, բայց ոչ ուրախ երգերով
Քո ծաղիկներին ծաղիկ աւելցնեմ,
Այլ դառն հեծութեան հառաչանքներով
Էդ անդընդախոր ձորերը լըցնեմ:

Ձորե՛ր, ա՛յ ձորեր, սեւ, լայնաբերան,
Սըրտիս էս խորունկ վերքերի նըման.
Աստծու հարածի հետքերն է՛ք դուք էլ,
Ձեզ մօտ եմ գալիս, ուզում եմ երգել:

Դուք էլ խօսեցէ՛ք, դուք էլ պատմեցէ՛ք,
Ձեր անդունդներով եկէ՛ք չափեցէ՛ք,
Դուք է՛լ է՛ք, տեսնեմ, էնքան մեծ ու խոր,
Ինչքան իմ հոգու քալսիծն ահաւոր...

ՀԻՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Կանաչ, վիթխարի ընկուզենու տակ,
 Իրենց հասակի կարգով, ծալպատակ,
 Միասին բաղմած,
 Մի շրջան կաղմած,
 ՔէՖ էին անում
 Եւ ուրախանում
 Մեր հրակայ սպայերն ու մեր հայրերը՝
 Գիւղի տէրերը:

Մենք, առոյգ ու ժիր գեղջուկ մանուկներ,
 Երեք դասընկեր,
 Նըրանց առաջին դըլխարաց կանդնած,
 Ձեռքներըս խոնարհ սըրտներիս դըրած,
 Զի՛լ, ուժեղ ձէնով՝ նըրանց լսպատում —
 Տաղ էինք ասում:

Երբ զըւարթաձայն մեր երգը լըռեց,
 Մըռայլ թամաղէն² բեխերն ոլորեց, —
 Նըրա հետ վերցրին լիք բաժակները
 Բոլոր մեծերը
 Ու մեզ օրհնեցին. — «Ապրէ՛ք, երեխէք,
 Բայց մեզ պէս չապրէ՛ք»...

Ժամանակ անցաւ, նըրանք էլ անցան,
 Զըւարթ երգերըս վըշտայի դարձան.
 Ու ես յիշեցի մեր օրը լալիս,
 Թէ մեզ օրհնելիս
 Ինչու ասացին. — «Ապրէ՛ք, երեխէք,
 Բայց մեզ պէս չապրէ՛ք»...

¹ Զէմով. ձայնով (այսէն). ամփոփման կամ սղման ձեւն է որ սովորական է արեւելահայ բարբառին մէջ. ինչպէս հմմտ. հէր — հայր, մէր — մայր, լէն — լայն, գէլ — դայլ, ծէր — ծայր, էս — այս, էսպէս — այսպէս եւն.:

² Թաւաղաւ. սեղանապետ, սեղանի գլուխ:

Խաղաղութի՛ւն ձեզ, մեր անբախտ պապեր,
 Ձեզ տանջող ցաւը մեզ էլ է պատել:
 Այժմ, տըխրութեան թէ քէ՞Քի ժամին,
 Ձեր խօսքն ենք առում. — «Ապրէ՛ք, երեխէք,
 Բայց մեզ պէս չապրէ՛ք»...

1887

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ

Արի՛, դուժան, վարի՛, դուժան,
 Օրն եկել է, ճաշ դառել³,
 Առը՛ շուռ տուր, խոփիդ դուրբան,
 Օրհնեալ է Աստուած, հօրօվէ՛լ⁵:

Քաշի՛, եղբ, ուսիդ մատա՛ղ,
 Քաշի՛, քաշենք, վար⁶ անենք.
 Ճիպտի՛ն⁷ արա, քըշի՛, հօտա՛ղ⁸,
 Մեր սեւ օրին ճար անենք:

Պարտքատէրը դանդաղ դընաց,
 Քեօխէն⁹ կը դայ, կը ծեծի,
 Տէրտէրն օրհնեց, անվարձ մընաց,
 Կը բարկանայ, կ'անիծի:

Էն օրն եկան թովջի¹⁰ արին,
 Հարկ են ուղում տէրութեան.
 Ի՞նչ տամ կոռին¹¹ ու բէպեարին¹²
 Վարի՛, վարի՛, իմ դուժան:

³ Դառել. դարձեր, դարձած:

⁴ Առը. խոփն վեր հանած հողը՝ արտը հերկելու ատեն:

⁵ Հօրօվէլ. ձայնարձակութիւն կամ յանկերգ ցանքի երգին մէջ:

⁶ Վար (վար անել). հերկ (հերկել):

⁷ Ճիպտին արա (ճիպտա). վարօցը շարժէ՛:

⁸ Հօտաղ. անասունները պահպանող, առաջնորդող աղայ, մշակ:

⁹ Քեօխէ. գիւղապետ:

¹⁰ Թովջի (արին). գիւղերուն մէջ հարկը բաժնելը՝ մէն մի տան կարողութեան համեմատ:

¹¹ Կոռ. հարկադիր ձրի ծառայութիւն կամ աշխատանք:

¹² Բէպեար. պարտադիր անվարձ աշխատանք:

Ձեռքս սրակաս, ուժըս հատած,
Հազար ու մի ցաւի տէր,
Ինձ են նայում մերկ ու սոված
Մի տուն լիքը մանուկներ:

Արի՛, դուժան, վարի՛, դուժան,
Օրն եկել է, ճաշ դառել,
Առը շո՛ւռ տուր, խոփիդ դուրբան,
Օրհնեալ է Աստուած, հօրովէ՛լ:

1887 Մարտ

ՀԱՄԵՐԳ

Վրտակը ժայռից ներքեւ է թռչում,
Թափ առած ընկնում քարերի գլխին,
Չարկում աւաղին, շաչում է, ճըչում,
Ճըչում անհանգիստ, փրփուրը բերնին:

Ինչպէս ծերունին, ձէնով պառաւած,
Չայնակցում է ժիր թոռնիկի երգին,
Այնպէս է ծերուկ անտառը կամաց
Արձագանք տալի ջրրի աղմուկին:

Այն ինչ բընութեան զըւարթ համերգի
Ունկընդիրն անխօս ու յաւերժական,
Ժայռը մըտախոհ՝ իր մըռայլ մըտքի
Նտեւից ընկած լըսում է նրբան:

1890 Դեկտեմբեր

ՔՐԻՍՏՈՍՆ ԱՆԱՊԱՏՈՒՄ

Անապատի մէջ խաւար ու տխուր,
Ցրած քարերից մի քարի վըրայ,
Դլխակոր նստած, մտախոհ ու լուռ՝
Աշխարհի մասին մտածում էր նա:

Նրա ճակատը մութն էր աւելի
Քան անապատը գիշերւայ մթնում¹³,
Մտածում էր նա՝ սէր-լոյս ծաւալի
Մարդկային կեանքի մութն անապատում :

Աչքի առաջեւ անց էին կենում
Սրբով, արինով խուժադուժ աղգեր,
Անճար ու տկար լաց էին լինում
Աղքատը, այրին ու որբը անտէր...

Եւ անապատում մի քարի վրայ
Միայնակ նըստած մըտածում էր նա...

1892 Յունաթի 18

ՀԱՅ ՈՒԽՏԱԻՈՐԻՆ

Գնաս բարով, ա՛յ ուխտաւոր,
Երանի՛ր՝ քեզ, հայ ուխտաւոր,
Որ կարօտով ու սիրառատ
Ուխտ ես դնում գէպ Արարատ :
Ձեփիւռներով, ծաղկանց բոյրով,
Ինչպէս ծնող սիրադորով,
Քեզ կողջունեն զմբուխտ հաղած
Գեղամ սարերն ու Արագած,
Եւ հարադատ աչքի նըման
Քեզ կը ժըպտայ վճիտ Սեւան,
Որ լեռների շուքերի հետ
Խաղ է անում, խայտում վէտ-վէտ,
Խայլիւում է ծըփանքներով,
Յօրինում է լոյսերի ծով,
Եւ մերթ վշտով ու տխրութեամբ
Սեւանում է, ինչպէս մութ ամպ :

¹³ Նրա ճակատը... մթնում. բաղդատական պատկեր՝ որ 9019
կու տայ Քրիստոսի մտածութեան խոր տխրութիւնը :

Հապա էն սա՛րն, էն սար հսկան,
 էն սարերի սարն ու արքան,
 Լազուր երկնի ծոցը մըտած,
 Ճերմակ դլուխն ամպեր փաթթած,
 Ահա կանգնեց ծանր ու տրտում...
 Քու առաջնն ու քու սրտում...
 Է՛, նա արդէն քանի սեւ դար
 Պերճ դադաթովն իր ձիւնափառ
 Շողշողում է, փայլատակում,
 Եւ ուխտաւոր հայի հոգում
 Հպարտութեան ծնում թունդեր
 Եւ սիրելի երազ՝ թէ դեռ
 Էն երկնահաս Մասեաց կատար
 Ուր հին տապանն առաւ դադար,
 Դադար կառնեն փառքերն մեր հին,
 Որ նորափայլ իջնեն կըրկին:

Հէնց¹⁴ խոնարհես աչքերըդ ցած,
 Լայն դաշտի մէջ, առջևդ յանկարծ
 Մտռախողից իր խաչի հետ
 Կը բարձրանայ մի սուր գլմբէթ
 Որ կը խօսի մարդու հոգուն՝
 — «Խաղաղութիւն ամենեցուն»...
 Այնտեղ էն հին դարերից վեր
 Երկնաքարոյ, հուժկու ձայներ
 Մահակ Պարթեւ, Ներսէս մեծին
 Խաղաղութիւն քարոզեցին:
 Այնտեղ լցուած ահեղ հոգով
 Ասուածային իր տեսիլքով
 «Էջ Միածինն ի Հօրէ»,
 Որ Հայաստան լուսաւորէ:
 Ու լոյսն առան ծաւալեցին
 Լուսաւորիչն ու սէդ Տրդատ,
 Որ տակաւին այնտեղ կեցած
 Կը սաւառնեն հոգիացած:

1892

¹⁴ Հէնց. երբ, իսկ, այնպէս, այն ինչ:

ԻՆՁ ՄԻ ԽՆԴՐԻՐ

Ինձ մի՛ խնդրիր, ես չեմ երգի
 Իմ տխրութիւնն ահագին
 Աղեկըտուր նըրա ձայնից
 Կը խորտակւի քո հոգին...
 Ո՛չ, քեզ համար այսպիսի երգ
 Երգելու չեմ ես երբեք:

Ես երգեցի սարի վըրայ
 Ու չորացան խոտ ու վարդ,
 Անապատ է այնտեղ հիմա,
 Սե՛ւ, ամայի անապատ...
 Հառաչանքից այրւած սարում
 Էլ ծաղիկ չի դալարում:

Բոյր ու դեղիւռ ես կ'ուզէի
 Եւ արշալոյս ոսկեվառ,
 Որ մի պայծառ երգ հիւսէի
 Ու երգէի քեզ համար...
 Բայց իմ սիրտը բըռնած են դեռ
 Հուր հառաչանք, սեւ դիշեր:

1892 Մարտ

ԱՆԴԱՐՁ ԺԱՄԲՈՐԴՆԵՐ

Իմ անցած կեանքն ու հին տարին,
 Երկու անգոր ծերի նըման,
 Ձըրոյց տալով դընում էին
 Դէպի աշխարհն յաւերժական:

Մինն ասում էր. — Ես ունէի
 Թարմ ու բուրեան ծաղիկներ,
 Որ բոլորը մարդկանց տըւի
 Գարնան գըրկովն առատարեր:

Միւսն ասում էր. — Ես ունէի
Շատ ըզգացմունք ու կորով,
Ու ողջ¹⁵ ես էլ նըրանց տըւի
Սիրանըւէր երգերով:

Մինն ասում էր. — Ես թողեցի
Ձըմեռ ու սեւ էն հովտում:
Միւսն ասում էր. — Ես՝ թախծալի
Մի սիրտ բեկեւած ու տըրտում:

Մինը ասաւ. — Բայց կը ծաղկի
էն հովիտը նորից նոր:
Միւսը հասեղ ոչինչ չասաւ,
Ու գնում էր գըլխակոր...

Էսպէս իմ կեանքն ու հին տարին,
Երկու անգոր ծերի նըման,
Ձըրոյց տալով գընում էին
Դէպի աշխարհն յաւերժական:

1897

ՏՐՏՄՈՒԹԵԱՆ ՍԱՂՄՈՍՆԵՐԻՑ

Տէ՛ր, մինչեւ երբ մեր աչքերը Քեզ մընան.
Մեր դոյժն հասաւ հեռո՛ւ-հեռու աղբերին,
Աշխարհն լըցւեց մեր աղաղակ, մեր կական¹⁶,
Ու չի անցել մեր տանջանքը տակաւին:

Ինչո՞ւ, Աստուած, որբերն արդեօք հայրական
Գուլթը կօրհնեն կոտորածի էս ձորում,
Թէ տարազիւ պանդուխտները կը պատմեն
Ողորմութիւնդ օտար-օտար ափերուն:

¹⁵ Ողջ. ամբողջ, ամբողջովին, բոլոր:

¹⁶ Կական. լաց, ողբ:

Մի՞թէ, Աստուած, դեռ բաւական չըտեսար
 քան աներ, վիշտ ու ցաւեր, հեծութիւն,
 Մի՞թէ Աստուած, հաճելի չեն քեզ համար
 Աղօթք ու սէր, կեանք ու տաղեր զըւարթուն¹⁷ :

1896

Աստուած, ինչպէս ծուխ օրերըս անցան,
 Ոսկերքըս, ինչպէս խըռիւ¹⁸, չորացան,
 Սիրտըս ցամաքեց, ընկայ խոտի պէս,
 Ճամփէս մոռացայ ահագին վըշտէս :

Հացըս նախատինքն եղաւ օտարի,
 Հանդիստըս ճամփում հալածանքների,
 Լըսեցի ցերեկն աղաղակ ու բօթ,
 Գիշերը լացի մինչեւ առաւօտ :

Տըքնեցի, ինչպէս բու անբախում,
 Ինչպէս միայնակ ճընճղուկ՝ տանիքում...
 Աստուած, տանջանքից ուժերըս հատան,
 Մի՞թէ չըհասաւ ժամը փըրկութեան¹⁹ :

1898

* * *

Տաղով եկաւ
 Ախով գնաց Սայաթ Նովան.
 Երգով եկաւ
 Վէրքով գնաց Սայաթ Նովան.

Սիրով եկաւ
 Սրով գնաց Սայաթ Նովան.
 Սիրով մնաց Սայաթ Նովան :

1913 Ապրիլի 7

¹⁷ Սոյն քերթուածը (Ա. մաս) ներշնչուած կը տեսնուի Դաւիթ
 մարդարէի ԻԴ. եւ ձիւ սաղմոսներէն :

¹⁸ Խռիւ. չոր ճիւղեր, թափթփուկ :

¹⁹ Այս քերթուածին Բ. բաժինը ուղղակի ներշնչուած է ձԱ.
 սաղմոսէն :

ԴՈՒ ՔՈ ՃԱՄՓԷՆ

Դու քո ճամփէն դընա՛, քոյրի՛կ,
Եւ թող լինի նա պայծառ,
Ինձ մի՛ ժրպտա, ինձ մի՛ սիրիւր,
Ես ընկեր չեմ քեզ համար:

Ելած կեանքի ամեն ճամփից,
Կարօտներով անմեկին,
Աղա՛հ, անվե՛րջ ու անհանդիստ
Թափառում է իմ հողին:

Մի ձեռք չըկայ, մի դիւրի չըկայ,
Պահի նըրան իրեն մէջ,
Խենթ, խելագար դընում է նա
Ձըգտումներովն իւր անվերջ:

Եւ ո՛վ դիտի՝ դեռեւս անմեղ
Քանի հողի կը տանջի,
Եւ ո՛վ դիտի՝ ինչ մո՛ւթ, ահե՛ղ
Անապատում կը հանգչի...

Դու քո ճամփէն դընա՛, քոյրի՛կ,
Եւ երբ լինենք մենք հեռու,
Աղօ՛թք արա, որ միւս անգամ
Ձըհանգիպենք իրարու:

1902 Ապրիլի 29

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ²⁰

Գալիս եմ, ահա, ասում է Աստուած,
Օգնեմ աղքատին իւր ծանրը կըռուում:
Չեմ թողնի նըրան յաւիտեան լըքւած
Նա ինձ ապաւէն կանչեց նեղ օրում:

²⁰ Սոյն քերթուածն ալ իւր ընդհանուր դեկրով ներչնչուած է ՂԳ. սաղմոսէն:

Վա՛յ ձեզ, հրդօրներ, որ իր խըրճիթում
 ձընչեցիք խեղճին, այրուն ու որբին,
 Ու՛ վէս, անսպասիժ, ասիք ձեր սըրբում —
 Ո՛րվ է վերեւից նայում մեր ճամփին:

Միթէ՞ կարծում էք՝ չէր տեսնում, լըսում,
 Նա, որ ըստեղծեց աչքեր ու ականջ.
 Միթէ՞ կարծում էք ուժն էր սպակառում
 Եթէ համբերեց դատելուց առաջ:

Ի՞մ աչքերն անթարթ ձեր ճամփի վըրայ
 Հսկել եմ արթուն ես ձեր գործերին,
 Էլ չեմ դանդաղի. դալիս եմ ահա՛,
 Ե՛ս, աէ՛ր զօրութեանց, եւ հուրն իմ ձեռին:

Ես հուր եմ ձրդում ճընշւածի հոգին,
 Նրա համարձակ լեղւով ձեզ դատեմ,
 Ես ուժ եմ տալիս աղքատի բաղկին,
 Նրա թիկունքին²¹ դալիս եմ ձեր դէմ:

1902

ՀԱՅՈՑ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Մեր ճամփէն խաւար, մեր ճամփէն գիշեր,
 Ու մենք անհատնում
 Էն անլոյս մըթնում
 Երկա՛ր դարերով դնում ենք դէպի վեր,
 Հայոց լեռներում,
 Դըժար լեռներում:

Տանում ենք հընուց մեր դանձերն անդին,
 Մեր դանձերը ծով,
 Ինչ որ դարերով

²¹ Նրա քիկունքին. իբրեւ անոր կոնակ, սաշտպան:

Երկնեւ է՝ ծընել մեր խորունկ հողին,
 Հայոց լեռներում,
 Բարձր լեռներում:

Բայց քանի անգամ չէկ անապատի
 Օրդունները²² սեւ
 Իրարու ետեւ
 Եկա՛ն դարկեցին մեր քարւանն աղնիւ
 Հայոց լեռներում,
 Արնոտ լեռներում:

Ու մեր քարւանը շրջիթ, սոսկահար,
 Թալանւած, ջարդւած
 Ու հատւած, հատւած
 Տանում է իրեն վէրքերն անհամար,
 Հայոց լեռներում,
 Սուգի լեռներում:

Ու մեր աչքերը նայում են կարօտ՝
 Հեռու աստղերին,
 Երկընթի ծէրին,
 Թէ ե՞րբ կը բացւի պայծառ առաւօտ՝
 Հայոց լեռներում:
 Կանաչ լեռներում²³:

1902

²² Օրդու. (թրք.) բանակ (զօրքի):

²³ Սոյն քերթուածի առաջին երկու տուներուն մէջ հեղինակը կ'ակնարկէ մեր ազգի կրածներուն հին դարերէն ի վեր, որոնց ընթացքին անհուն զուրկութեանքով սերունդէ սերունդ փոխանցուեցաւ մեր ցեղային անկապտելի անդին դանձերը: Վերջին տուներուն մէջ կ'ակնարկուին արար-թուրք խժոժութիւնները որոնք մահացող վէրքեր տուին մեզի. մենք, սակայն, կը քալենք աչքերնիս երկինք՝ յուսալից սպասումով մեր ազատութեան պայծառ օրուն:

ՎԱՅՐԷՋՔ²⁶

Քառասուն տարի բըռնած ճանապարհ
 Շիտակ, անվեհեր
 Գընում եմ ես վեր,
 Դէպ Անյայտը սուրբ, աշխարհքը պայծառ:

Քառասուն տարի ճամբոյն ահարկու
 Անցել եմ էսպէս,
 Ու հասել եմ ես,
 Խաղաղութեանն եմ հասել ես հողու:

Թողել եմ ներքեւ, մեծ լերան տակին,
 Եւ փառքը, եւ դանձ,
 Եւ քէն, եւ նախանձ. —
 Ամենը, ինչ որ ճընշում է հողին:

Եւ էն ամենը, արդ նայում եմ ես —
 Տեսնում եմ նորից
 Իմ լերան ծէրից. —
 Էնպէս հասարակ, դատարկ են էնպէ՛ս...

Եւ ես իմաստուն ու բեռնա թեթեւ,
 Անհող ծիծաղով,
 Երգով ու տաղով,
 Իջնում եմ դըւարթ իմ լերան ետեւ...

1909 Փետրւարի 7 (քանոն)

²⁶ «Վայրէջք»-ը Թ. զրած է 1909ի Փետր. 20ին Թիֆլիսի Մեռեխի բանտին մէջ՝ իր ծննդեան (40-ամեակին — 1869): Իրբեւ իմաստասէր, նա կեանքի յուսախաբուծիւնն եւ ունայնութիւնը կը բացատրէ. ու համարելով թէ արդէն հասած է իր կեանքի կամ դործունէու-թեան բարձրակէտին՝ այլեւս կը սկսի իր վայրէջքը դէպի մահ:

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ

Վաղուց թէեւ իմ հայեացքը Անյայտին է ու հեռուում
 Ու իմ սիրտը իմ մրտքի հետ անհուններն է թափառում,
 Բայց կարօտով ամեն անգամ երբ դառնում եմ դէպի քեզ՝
 Մըղկըտում²⁵ է սիրտըս անվերջ քո թառանչից աղեկէզ,
 Ու դաղթական զաւակներդ լուռ շարքերից ուժասպառ,
 Ե՛ւ գիւղերից, ե՛ւ շէնքերից՝ տըխո՛ւր, դատարկ ու խաւար,
 Չարկւա՛ծ հայրենիք,
 Զըրկւա՛ծ հայրենիք:

Խըռնըւում են մըտիս հանդէպ բանակները անհամար,
 Տըրօրում են քո երեսը, քո դաշտերը ծաղկալառ,
 Ու ջարդարար վոհմակները աղաղակով վայրենի,
 Աւարներով, աւերներով, խընջոյքներով արիւնի,
 Որ դարձրին քեզ մըշտական սեւ ու սուղի մի հովիտ,
 Խեղճ ու լալիւն քո երգերով, հայեացքներով անժըպիտ,
 Ողբի՛ հայրենիք,
 Որբի՛ հայրենիք:

Բայց հին ու նոր քո վէրքերով կանգնած ես դու կենդանի,
 Կանգնած խոհո՛ւն խորհրդաւոր ճամբին նորի ու հընի.
 Հառաչանքով սրբտի խորքից խօսք ես խօսում Աստծու հետ
 Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաղէտ,
 Խորհում ես դու էն մեծ խօսքը, որ տի ասես աշխարհքին
 Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձրգտում է մեր հոգին —
 Յոյսի՛ հայրենիք,
 Լոյսի՛ հայրենիք:

Ու պիտի դայ հանուր կեանքի արշալոյսը վառ հաղած,
 Հաղա՛ր հաղար լուսապայծառ հոգիներով ճառաղած,
 Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,
 Կենսաժըպիտ իր շողերը պիտի ժըպտան ատաջին,

²⁵ Մղկտալ. ցաւիլ, մորմոքիլ:

Ու պօհտներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անէծքով,
Պիտի դովեն քո նոր կեանքը նոր երգերով, նոր խօսքով,
Իմ նո՛ր հայրենիք,
Հըղո՛ր հայրենիք²⁶...

1915

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Ու վեր կացայ ես, որ մեր հայրենի օրէնքովը հին՝
Վերջին հանգիստը կարդամ իմ ազգի անբախտ զոհերին,
Որ չէն ու քաղաք, որ սար ու հովիտ, ծովից մինչեւ ծով
Մարած են, մեռած, փրուած ու ցըրուած հաղար հաղարով...

Ու կըրակ առայ հայոց հրդեհի կարմիր բոցերից,
էն խաղաղ ու պաղ երկրների ծոցում վառեցի նորից
Մասիսն ու Արան, Սիփանն ու Սըրմանց, Նեմրուժ, Թան-
դուրէք,
Հայոց աշխարհքի մեծ կերոնները վառեցի մէկ մէկ,
Սուրբ Արագածի կանթեղն էլ, ինչպէս հեռաւոր արեւ,
Անհաս, աննըւաղ, միշտ վառ ու պայծառ, իմ դըլխի վերեւ...

Կանգնեցի խոժոռ, մենակ ու հաստատ, Մասիսի նըման,
Կանգնեցի թըլառ էն հողիներին՝ ցըրած յաւիտեան
Մինչեւ Միջագետք, մինչեւ Ասորիք, մինչեւ Ծովն Հայոց,
Մինչեւ Հելլեասպոնտ, մինչեւ Պոնտոսի ափերն ալեկոծ:
— Հանդէ՛ք, իմ որբե՛ր... իզո՛ւր են յուզմունք, իզո՛ւր
են անհաճ...

Մարդակեր դադան՝ մարդը՝ դեռ երկար էսպէս կը մնայ...»

Աջիցըս Եփրատ, ձախիցըս Տիգրիս՝ ահեղ ձէներով,
Սաղմոս կարդալով՝ անցան, դընացին խոր խոր ձորերով,

²⁶ Հակոբակ Զարդի ու աւերածի տեսիլին՝ երբ կը գրէր Թու-
մանեան սոյն բերթուածը, մարդարէի շունչով կ'երգէր հայ ցեղին
յարութիւնը՝ յետ անոր արիւնալից Գողգոթային:

Ամպերն էլ ելան Ձիրաւի ձորից, հըսկայ բուրվառից,
 Ճանապարհ ընկան Ծաղկանց սարերից, Հայկական պարից,
 Բոյլ-բոյլ, բուրաւէտ, շարժւեցին դէպի կողմերը հեռու,
 Գոհար. ցօղեւու, ծաղկունք բուրելու, բուրմունք խընկելու
 Մինչեւ Միջագետք, մինչեւ Ասորիք, մինչեւ Ծոփն Հայոց,
 Մինչեւ Հելլեսպոնոս, մինչեւ Պոնտոսի ափերն ալեկոծ...
 — Հանդէ՛ք, իմ որբե՛ր... իզո՛ւր են յուղմունք, իզո՛ւր
 են անշահ...»

Մարդակեր գաղան՝ մարդը դեռ երկար էսպէս կը մնայ²⁷...»

1916

ԻՍ ԵՐԳԸ

Գանձեր ունեմ անտա՛կ, անծէ՛ր
 ես հարուստ եմ, ջա՛ն, ես հարուստ:
 Ծով բարութիւն, շընորհք ու սէր
 Ճոխ պարգեւ եմ առել վերուստ:

Անհուն հանքը իմ գանձերի
 Սիրտս է առատ, լէ՛ն ու ազատ.
 Ինչքան էլ որ բաշխեմ ձրրի —
 Սէրն անվերջ է, բարին անհատ:

Երկիւղ չունեմ, ահ չունեմ ես
 Գողից, չարից, չար փորձանքից,
 Աշխարհքով մին՝ ահա էսպէս
 Շաղ եմ տալիս իմ բարձունքից:

Ես հարուստ եմ, ես բախտաւոր
 Իմ ծընընդեան պայծառ օրէն,
 Էլ աշխարհ չեմ դալու հօ նոր,
 Իր տըւածն եմ տալիս իրեն:

1918 Յունւարի 5

²⁷ Սոյն գերթուածն ալ, թաղմանական վսեմ եւ յուզիչ հանդիսաւորութեամբ, դրուած է մեր ազգի մեծ կոտորածէն վերջ:

ՔԱՌԵԱԿՆԵՐ

Ա'նց կացա՛ն¹...
Օրերս թըռան, ա'նց կացա՛ն.
Ախ ու վախով, դարդերով
Սիրտըս կերա՛ն, ա'նց կացա՛ն:

1890

Վերջացա՛ւ...
Կեանքս մաշեց, վերջացա՛ւ.
Ինչ յոյս արի՛, փուչ էլաւ,
Ինչ խընդուծիւն՝ վերջը ցա՛ւ:

1890

Հիմի բացե՛լ են հանդէս
Երգիչները իմ անտես.
Ջա՛ն, հայրենի՛ ծըղրիղներ,
Ո՞վ է արդեօք լըսում ձեզ:

1916 Յունիս

Ե՛տ չեկա՛ւ...
Գընա՛ց, գընա՛ց, ե՛տ չեկաւ,
Անկուշտ մահին, սեւ հողին
Գերի մընաց, ե՛տ չեկաւ:

1916 Յունիս

Ո՞ւր կորա՛ն...
Մօտիկներըս ո՞ւր կորա՛ն.
Ինչքան լացի, ձէն ածի՛
Ձէն չի տըւին, լո՛ւտ կորան:

1916 Յունիս

¹ Անց կացան. անցան դնացին. ինչպէս վեր կացան՝ վեր ելան:

Ծով է իմ վիշտն, անափ ու խոր,
 Լիքն ակունքով հաղարաւոր.
 Իմ զայրոյթը լիքն է սիրով,
 Իմ գիշերը լիքն աստղերով:

1917 Փետրւարի 9

Քանի մահ կայ իմ սըրտում,
 Թափուր դահ կայ իմ սըրտում.
 Ձէ՞՞ դու էլ ես մահացու.
 Մահի ահ կայ իմ սըրտում:

1917 Նոյեմբերի 7

Ե'տ եկէ՛ք...

Գարնան վարար² գետ եկէ՛ք,
 Անցա՛ծ օրեր, խի՛նդ ու սէ՛ր,
 Դարձէ՛ք, իրար հետ եկէ՛ք:

1917 Նոյեմբերի 11

Հին աշխարհքը ամեն օր
 Հաղար մարդ է մըտնում նոր,
 Հաղար տարւան փորձն ու գործ
 Ըսկըսում է ամեն օր:

1917 Նոյեմբերի 11

Ո՛վ իմանայ՝ ո՛ւր ընկանք,
 Քանի օրւայ հիւր ընկանք,
 Սէրն ու սիրտն էլ երբ չըկայ՝
 Կըրա՛կ ընկանք, զո՛ւր ընկանք:

1917 Նոյեմբերի 30

Քանի՛՞ ձեռքից եմ վառել,
 Վառել ու հուր եմ դառել,
 Հուր եմ դառել՝ լոյս տըլել,
 Լոյս տալով եմ ըստղառել:

1917 Դեկտեմբերի 24

² Վարար. յորդ, առատ (ջուր):

Ի՛նչքան ցաւ եմ տեսել ես,
 Նենդ ու դաւ եմ տեսել ես,
 Տարել, ներել ու սիրել³, —
 Վատը՝ լաւ եմ տեսել ես:

1917 Դեկտեմբերի 24

Մընացել է բերդը մեղ,
 Յաղթանակի երթը մեղ.
 Անց են կացել՝ ով կային,
 Հիմի կըզայ հերթը մեղ:

1917 Դեկտեմբերի 26

Ի՛նչ ես թռչում, խեւդեւ սի՛րտ,
 Հաղար բանի ետեւ, սի՛րտ,
 Ես ո՞նց հասնեմ հաղար տեղ
 Քեզ պէս թափով, թեթեւ, սի՛րտ,

1918 Յունւարի 25

Լինէ՛ր հեռու մի անկիւն,
 Լինէ՛ր մանկան արդար քուն,
 Երազի մէջ երջանիկ,
 Հաշտ ու խաղաղ մարդկութիւն:

1918 Փետրւարի 2

Մի հաւք զարկի ես մի օր.
 Թըռա՛ւ, դընաց վիրաւոր:
 Թըռչում է միշտ իմ մտքում
 Թեւը արնոտ ու մոլոր:

1918 Փետրւարի 2

Մեռա՛ն, մեռա՛ն... Եւ, ահա,
 Խառնըւել են կեանք ու մահ.
 Չեմ հասկանում աշխարհքի
 «Կան ու չըկան» ես հիմա:

1919 Հոկտեմբերի 8

³ Այս տողով Թումանեան խոսացուցած է երեք բայերու մէջ
 խոր իմաստութիւն մը մարդկային ու զրիստոնէական բարձրագոյն
 առաքինութիւններուն, այն է՝ համբերել — ներել — սիրել:

Հէ՛յ աղա՛հ մարդ, հէ՛յ անդո՛հ մարդ,
միտքըդ երկար, կեանքըդ կարճ,
Քանի՛ք քանիսն անցան քեզ պէս,
քեզնից առաջ, քո առաջ.
Ի՛նչ են տարել նըրանք կեանքից,
թէ ինչ տանես դու քեզ հետ,
Խաղաղ անցիր, ուրախ անցիր
երկու օրւան էս ճամփէդ:

1919 Նոյեմբեր

Ի՛նչ իմանաս Ըստեղծողի
զաղտնիքները անմեկին.—
Ընկեր տըւաւ, իրար կապեց
էս աշխարհքում ամենքին.
Բանաստեղծին թողեց մենակ
մեն ու մենակ Իրեն պէս,
Որ Իրեն պէս մըտիկ անի
ամեն մէկին ու կեանքին:

1920 Մարտի 30

Առատ, անհատ Աստծու հրման
միշտ տեղալուց յողնել եմ ես.
Հողիս ծարաւ՝ սըրան-նըրան
մըտիկ տալուց յողնել եմ ես.
Մինը պիտի դար իմ դէմը՝
ճոխ ու շրոայլ անհաշիւ,
Ամեն ճամփում ըսպասելուց
ու փընտրելուց յողնել եմ ես:

1921 Փետրւարի 14

Ես չընչում եմ միշտ կենդանի
Աստծու շունչը ամենուր.
Ես լըսում եմ Նըրա անլուռ
կանչն ու հուռչը ամենուր.
Վեհացնում է ու վերացնում
ամենալուր իմ հողին
Տիեզերքի խոր մեղեդին
ու մըրմունջը ամենուր:

1921 Փետրւարի 14

Հաղար տարով, հաղար դարով
 առաջ թէ ետ, ի՞նչ կայ որ .
 Ես եղել եմ, կա՛մ, կը լինիմ
 յար ու յաւէտ, ի՞նչ կայ որ
 Հաղար էսպէս ձեւեր փոխեմ,
 ձեւը խաղ է անցաւոր,
 Ես միշտ հոգի, տիեզերքի
 մեծ հոգու հետ, ի՞նչ կայ որ :

1921 Մայիսի 3

Աստեղային երազների
 աշխարհքներում լուսակաթ,
 Մեծ խոհերի խոյանքների
 հեռուններում անարատ,
 Անյիշելի զերյուշերի
 մըշտներում նըրբաղօտ՝
 Երբեմն, ասես, ըզրում եմ ես,
 թէ կը հասնիմ նըրա մօտ...

1921 Մայիսի 16

Բարձր է հընոց աշխարհքն Հայոց
 ու Մասիսը երկնադէտ .
 Իմ խոր հոգին էն բարձունքին
 խօսք է բացել նըրա հետ —
 Անհաս բանից, ըսկզբանից,
 երբ չըկան էլ դեռ չըկար,
 Մինչեւ վախճանն անվախճանի
 քընընում է դարէ դար :

1921 Մայիսի 21

Ո՛վ անճառ Մին, որ ամենին
 միացնում ես մի կեանքում,
 Ամեն կեանքում ու երակում
 անտես, անկէղ բորբոքում, —
 Ողջ ազատ են ու հարազատ
 էս աշխարհքում Քեզանով,
 Ողջը Քո մէջ՝ անմա՛հ, անվերջ՝
 Քեզ են երզում Քո ձէնով...

1921 Օգոստոսի 3

Իմ կընուենքին երկիրնքը՝ ժամ,
 արեւը՝ ջահ սըրբազան,
 Ծխածանը՝ նարօտ եղաւ,
 ամենքի սէրն՝ աւազան.
 Սարը եղաւ կընքահայրըս,
 ցօղը՝ միւռոն կենսաւէտ,
 Ու կընքողըս նա ինքն եղաւ,
 որ սահմանեց ինձ պօէտ:

1921 Հոկտեմբեր

Կեանքըս արի հըրապարակ
 ոտքի կոխան ամենքի.
 Խաւիան, խոսպան ու անպըտուղ,
 անցաւ առանց արգիւնքի:
 Ի՞նչքան ծաղիկ պիտի բուսնէր,
 որ չըբուսաւ էս հողին...
 Ի՞նչ պատասխան ես պիտի տամ
 հող ու ծաղիկ տըւողին...

1921 Սեպտեմբերի 5

Տիեզերքում աստուածային
 մի ճամբորդ է իմ հողին.
 Երկրից անցւոր, երկրի վառքին
 անհաղորդ է իմ հողին.
 Հեռացել է ու վերացել
 մինչ աստղերը հեռաւոր,
 Վար ննացած մարդու համար
 արդէն խորթ է իմ հողին:

1922 Յուլիսի 8

Ինքան շատ են ցաւերն, աւերն իմ սըրտում,
 Ինքան տըրտում կորած լաւերն իմ սըրտում...
 Չեմ էլ յիշում չար ու խաւար էս ժամին՝
 Երբ են վայլել ուրախ օրերն իմ սըրտում:

1922 Յուլիսի 12

Ա Ղ Ի Է Ս

Աղւէսն եկաւ բարձրը սարից
Հարցմունք արաւ լիքը թառից.
Մեծ խորոզ է հարկաւոր ինձ.
Քաղցած աղւէսն, աղին ծաղիկ:

Աղւէսն հաղել քուրքը դեղին.
Պըտուտ կուգայ շուրջը դեղին.
Ջուր կըտրըւեց տատիս՝ լեղին.
Դեղին աղւէսն, աղին ծաղիկ:

Աղւէսն ասաւ պառաւ տատին,
«Մըտիկ չեմ տայ ձեռիդ փէտին,
Կարօտեմ եմ թըմփիլիկ՝ ճուտին».
Անսլախ աղւէսն, աղին ծաղիկ:

Աղւէսն եկել, նստել դէզին,
Երկար աղին ծըռել վըզին,
Աչք է ձըզել մեր խորոզին...
Էն դող աղւէսն, աղին ծաղիկ:

Մին էլ կանչեց տատրս պառաւ,
Ամա՛ն, հասէ՛ք. տարա՛ւ, կերա՛ւ...
Գըլխիս էս ինչ փորձանք բերաւ
Անտէր աղւէսն, աղին ծաղիկ:

Ա՛յ իմ խորոզ, կարմիր խորոզ,
Ման կուգայիր դռող, դռող.
Փետուրդ արաւ ողջ դար ու փոս
Էն չար աղւէսն, աղին ծաղիկ:

1 Տատ. մամ, մեծ մայր:

2 Թմփիլիկ. դերուկ, փափուկ, պարարտ:

Աղւէ՛ս, աղւէ՛ս, փոքրիկ դաղան,
 Ոտներըդ կարճ ու խիստ վաղան,
 Շըներն ամեն քեզ չը հասան,
 Ճարպիկ աղւէս, ագիդ ծաղիկ:

ԿԱՔԱԻՒ ԳՈՎՔԸ

Արեւ բացւեց թուխ ամպերէն,
 Կաքաւ թրուա կանանչ սարէն
 Կանանչ սարէն, սարի ծէրէն
 Բարեւ բերաւ ծաղիկներէն:

Սիրունի՛կ, սիրունի՛կ,
 Նախշուն կաքաւիկ:

Քու բուն հիւսած ծաղիկներով՝
 Շուշան, նարգիզ, նունուֆարով,
 Քու տեղ լըցւած ցօղ ու շաղով,
 Քընես, կեղնես երգ ու տաղով:

Սիրունի՛կ, սիրունի՛կ,
 Նախշուն կաքաւիկ:

Քու թեւ փափուկ ու խառուտիկ,
 Պըստի կըտուց, կարմիր տոտիկ,
 Կարմիր կարմիր տոտիկներով
 Կը շօրօրաս ճուտիկներով:

Սիրունի՛կ, սիրունի՛կ,
 Նախշուն կաքաւիկ:

Երբ կը կանդնես մամուռ քարին,
 Սաղմոս կասես ծաղիկներին,
 Սարեր ձորեր զըւարթ կանես,
 Դարդի ծովէն սիրտ կը հանես:

Սիրունի՛կ, սիրունի՛կ,
 Նախշուն կաքաւիկ:

ԵՐԿՐՈՒՄ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Հէքեաթն ասում է, թէ՝ մի աշխարհքում
 Բըրսում էր առատ ջուրն անմահական,
 Բայց ազահ վիշապն առաջը փակում,
 Ծարաւ էր թողնում աշխարհքն աննրման:

Նա դոհ էր ուզում սիրուն աղջիկներ,
 Որ ջուր բաց թողնի ծարաւ աշխարհքին,
 Եւ, անմահութեան ջրի փոխարէն,
 Մարդիկ շատ դարեր արցունք խմեցին:

Մինչեւ մի տղայ, Լոյս երկրից եկած,
 Կըռեց էն դերի աշխարհքի համար,
 Յաղթեց, ազատեց աղբիւրը փակւած,
 Տանջւող հոգիներ փրկեց անհամար:

Ոչ, հէքեաթ չի սա լիքը հըրաշքով,
 Եղած թէ չեղած մըթին աշխարհքում,
 Ճըշդերիտ դէպք է սա տեսած իմ աչքով,
 Եւ հէքեաթ չըկայ մեր անրախտ կեանքում...

Մեր երջանկութեան աղբիւրը փակւած՝
 Մեր վարդ քոյրերին յօշոտում է նա...
 Ա՛խ, ի՞նչքան արին, արցունք է թափւած
 Մեր սիրուն երկրի սարերի վըրայ...

Ա.

«Լօ՛-լօ՛, լօ՛-լօ՛, մերն են սարեր,
 Ծաղկոտ սարեր Տարօնի,
 Ծաղկոտ սարեր, ազատ օրեր,
 Սէրն ու զըզւանք սիրունի...
 Լօ՛-լօ՛, լօ՛-լօ՛»...

Գըլո՛ւխ տըւէք³, դոռող սարե՛ր,
 Անց է կենում Մուսարէկ,
 Գըլո՛ւխ տըւէք, վախկոտ հայե՛ր,
 Զընչին դիւղեր ու օրէք:
 Ո՞ւր կայ ոսկի, ո՞ւր սիրուն կին,
 Առաջ բերէք գըլխարաց.
 Ո՞վ կայ ընդդէմ նըրա կամքին,
 Ո՞վ է կեանքից կըշտացած...
 Մըշու երկրում թուր է դարկում
 Դողում են Վան իր թափից,
 Դողում են Վան, մինչ Արզըրում,
 Ահեղ թափից, սարսափից...

Բ

Գըլո՛ւխ տըւէք, վախկո՛ւտ հայեր.
 Զըրը՛նդ, եկաւ Մուսարէկ.
 — Հէ՛յ, դո՛ւրս արի, քէշիշ բարա՛.
 Ո՞վ կայ տան մէջ, դո՛ւրս եկէք...»
 Ու սըրահի կէսմութի մէջ
 Գուճհուպ⁵ եկաւ քահանան,
 Դողդըջելով, ծերուկ ու խեղճ,
 Ֆըռնած սարսափին իր մահւան:

— Հաւա՞ն ես ինձ, քէշիշ բարա՛,
 Հապա նայիր մի վերեւ...»
 — Աստուած է քեզ հաւնել, աղա՛,
 Աստուած կեանք տայ ու արեւ:
 — Դէ բե՛ր, հապա՛, որ հաւան ես,
 Աղջիկըդ բեր, տուր ինձ կին.
 Դէ՛հ, շո՛ւտ արա, քէշի՛շ բարա,
 Դուրս բեր սիրուն Շողիկին:»

³ Գլուխ տալ. խոնարհիլ, ծովի, յարգանք մատուցանել.

⁴ Քէշիշ բարա. Տէր հայր, քահանայ:

⁵ Գուճիուպ (եկաւ). կծկուեցաւ:

Լուռ կանգնած է ծեր քահանան,
Դէմքը դեղին, միրքի սէն,
Ծիծաղո՞ւմ է լացի նւման,
Թէ լալիս է ժպտերե՛ս...
— Հա՛, հա՛, հա՛, հա՛... հաւա՞ն չես ինձ...»
Խընդաց խումբը՝ հա՛, հա՛, հա՛...
Ու սոսկալի էն ծիծաղից
Սարսափն ընկաւ տան վըրայ:

— Ո՛վ չի հաւան Մուսարէկին...
Մի Մուսարէկ — մի աշխարհք...
Բաղդաւոր ենք՝ ես... իմ որդին...
Ո՛վ է տեսել էսպէս փառք...
Միայն թէ, աղա՛, դու՞ արա մեզ,
Ժամանակ տուր երկու օր,
Որ պատրաստենք բէկին վայել.
Ոտիդ հողն ենք նորից նոր...»
— Մի երկու օ՛ր... բայց իմացի՛ր,
Ետ եմ դալու ես նորից.
Երկի՛նք թըռիւր, գետի՛նն անցիր,
Չես աղատուիլ իմ ձեռից...

«Լօ՛-լօ՛, լօ՛-լօ՛, մերն է Տարօն
Վայելքներով իր բոլոր...
Լօ՛-լօ՛, լօ՛-լօ՛...» Հանդաւ «լօ՛-լօ՛»ն
Սարի ետեւ հեռաւոր:

Գ.

Ի՛նչ է ղօղանջում զանգակը գուժկան,
Գիւղի զանգակը էս անվախտ՞ ժամին.
Կարկո՞ւտ է գալիս մըթնած երկրնքից,
Հրդեհ է ձրդեկ գիւղը թըշնամին...

6 Անվախտ. ժամանակէն դուրս (հոս թուրքերէն է. տե՛ս ստորեւ ամօտա՛հայերէնը նոյն բառին):

— Ի՞նչ էլ պատահել, ծերունի տէրտէր,
 Ինչ ես վրդովում էս յոգնած խալխին⁷ :
 — Եկէ՛ք, իմ որդի՛ք, եկէ՛ք, իմ որբեր .
 Երկինքը փրկաւ իմ ճերմակ զբլխին...»

Ու լաց է լինում զանգակը ժամի,
 Գալիս է կանգնում ամբողջ Տաւորիկ,
 Ու ձայն է տալի, դռնում ծերունի
 Իրենց քահանան ձայնով զարհուրիկ :

— Եկէ՛ք, ընկեր-հարեւաններ,
 Իմ Շողիկի հարսնիքին .

Ծաղիկ բերէք ալ ու կարմիր
 Իր անթառամ պըսակին...

Դուստր եմ պահել ես նազելի,
 Սըրտիս խընդում, աչքիս լուս .

Քուրդը եկաւ դուստրըս խըլի,
 Կեանքը խըլի ծերունուս :

Հայր էք դուք էլ, զաւակի տէր,
 Մի ճար դըտէք իմ ցաւին...»

Ու ծերերը՝ չո՛ր, ալեհէ՛ր,
 Հառաչում են խըմբովին .

— Ափսո՛ս Շողիկ, սիրո՛ւն Շողիկ,
 Մեր աչքի լուս, մեր ալ ծաղիկ...

Վա՛յ խեղճ ծընող, ծեր քահանայ .

Քըրդի ճամփէն տատասկ դառնայ...»

Հընչում է դարձեալ զանգակը ժամի,
 Կանչում է, դռնում հայրը ծերունի .

— Հաւա՛ր⁸ ճըլլէք հեռու տեղեր,
 Աղդ ու աղինք իմանան,

Դըրօշ բանան, զօրքեր կապեն,
 Թող դա՛ն, հասնեն օգնութեան...»

Եւ զուր ծերունու աչքերը անզօր

⁷ Խալխ . ամբողի, բազմութիւն :

⁸ Հաւար (ճղէք) . ձայնարկութիւն օգնութիւն կանչելու :

Հըրաշք են փընտրում մըշուշոտ հեռում,
 Լուռ են ու դատարկ ճամփէքը բոլոր,
 Փռչի չի ելնում հայոց դաշտերում:
 Լալիս է սակայն զանգակը կըրկին
 Ու դռնում է ծերն առաւել ուժգին.
 — Լըսի՛ր, Աստուած, եթէ մի օր
 Բոյր եմ խընկել քո անւան,
 Թէ դու էլ ես ծե՛ր, ալեւո՛ր,
 Ու դուժ ունիս հայրական...»
 Բայց ծածկում է դէմքը Աստուած՝
 Հայից դարձած ու խրոտի,
 Սեւ սեւ գիշերն իջնում է ցած,
 Լիքը անքուն ցաւերով...

Դ

Հայի գիշե՛ր, հայի գիշե՛ր,
 Ցաւի անդունդ անյատակ...
 — Աղջի՛կս, ինչո՞ւ չես քընում դեռ,
 Ի՞նչ ես լալիս տեղի տակ:
 — Չ'իտեմ, մայրի՛կ, ինչու էսպէս
 Քուն չի գալի էլ աչքիս.
 Աչքըս քանի փակում եմ ես՝
 Քուրդն է կանգնած առաջիս...
 — Քընի՛ր, բալաս⁹, մի՛ վախենար,
 Աստուած կայ դեռ երկընքում.
 Քուրդ ու տաճիկ, զարկ ու աւար
 Շատ ենք տեսել մեր կեանքում...
 — Մայրի՛կ, մայրի՛կ, չե՞ս խմանում,
 Ո՞վ է լալիս դուքսն անտէր...
 Մայրի՛կ, մի տես՝ չի լուսանում...
 Ա՛խ ինչ ծանր է էս գիշեր...
 — Քնի՛ր, բալա՛ս, Որբն է մենակ
 Իր Սըհակին որոնում,

⁹ Բալայ. սիրելի, զաւակ:

է՛ր, քեզ նըման, մի ժամանակ
 նա էլ աղջիկ է լինում,
 Հաւանում է չար տաճիկը,
 Գալիս եղբօրն ըսպանում,
 Ճարը հատած հէգ աղջիկը
 Աստծուն աղօթք է անում.

— Ո՛ւ Տէր Աստուած, թեւեր տուր ինձ,
 Թեթեւ թեւեր թռչունի,
 Թըռչե՛մ, կորչեմ էս աշխարհքից,
 Անդուժ ձեռքից դուժմանի...»

Էն օրւանից ման է գալի
 Թեւեր առած, անդադար,
 Կանչո՛ւմ, կանչո՛ւմ, ձէն է տալի
 Իր Սըհակին ջրատար...

Քնի՛ր, բալա՛ս, Աստուած դեռ կայ,
 Աղօթք ասա մըտքիդ մէջ,
 Հիմի շուտով լինս¹⁰ էլ կը գայ,
 Էս գիշերն էլ ունի վերջ...»

— Թրը՛խկ... Թրը՛խկ...

— Ո՛ւ է ծեծում

Կէս գիշերին դուռն էգպէս...

— Թրը՛խկ, Թրը՛խկ...

Հէ՛յ, չե՞ս լըսում,

Վեր կաց, տէքտէ՛ր, ներս թող մեզ...»

Ու անլեզու քրքի նըման
 Սարսափն յանկարծ ընկաւ տուն,
 Տեղի¹¹ տակին կըծիկ եկան
 Մանուկները դեռ անքուն:
 Մարեց մայրը լեղապատառ,
 Աղջիկն հանդաւ¹² մօր գըրկում,
 Իսկ դուռն ուժգին ու անդադար
 Հա՛ դարկում են ու դարկում:

¹⁰ Լիս. լոյս:

¹¹ Տեղ. անկողին:

¹² Համգաւ. (հանգչեցաւ) մարեցաւ, (կ'ըսուի նաեւ ճրագին
 - կրակին համար):

Լոյսը ձեռքին ծերը գունատ
 Դողդողում է, երերում...
 Ձեռքը փակին տարաւ յանկարծ,
 Դուռը բացւեց խաւարում,
 Շառաչեցին, շողշողացին
 Ձէնքերն լուսունն էն աղօտ,
 Ու զինավառ ներս խոտեցին
 Երեք ջահել անծանօթ:
 — Օրհնեա՛ր ի Տէր, հայի լեզուով
 Ողջունեցին ու մըտան.
 Մութ խրքճիթը լըցւեց լուսով
 Անակընկալ խընդութեան:
 — Էսպէս անժամ, զարիւր¹³ եղբա՛րք,
 Ո՞ւսկից էք դուք դալիս ինձ...»
 — Հեռու տեղից, Կովկասից...»
 — Բայց մեր երկիր ամեն անկիւն
 Մահւան երկիւղ ու վտանդ...»
 — Դըրա համար մենք եկանք...»
 — Իսկ դուք չունէ՞ք ձեր աշխարհքում
 Տուն, տեղ, ծրնող, քոյր կամ կին...»
 — Ունենք, թողինք ամենքին...»

Հայի գիշե՛ր, անքո՛ւն գիշեր,
 Լի՛ տանջանքով ու մութով,
 Հայի գիշե՛ր, անհո՛ւն գիշեր,
 Լի՛ ահաւոր խորհուրդով...:

13 Ղարիբ (Թրք.)․ պանդուխտ, օտար:

ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Ա

Ժամանակով կատուն ճոն՝ էր,
 Շունն էլ զըլխին զըդակ չունէր,
 Միայն, գիտեմ ոչ՝ որդիանց որդի²
 Ճանկել էր մի դառան մորթի:
 Եկաւ մի օր, ձմեռւան մըտին,
 Կատուի կուշտը տարաւ մորթին:

— Բար՛ աջողում, ուստա Փխօ,
 Գլուխըս մըրսեց, ի սէր Ասծոյ,
 Ա՛ռ էս մորթին ու ինձ համար
 Մի զդակ կարի զըլխիս յարմար:
 Վարձիդ համար միամիտ մընա՛,
 Համա-համա³ շատ չուշանայ:

— Աչքիս վըրայ, քեռի Քուչի.
 Մի զըդակ ա, հօ մի քուրք չի.
 Քու թանկադին խաթեր համար
 Ուրբաթ օրը համեցէք տար:
 Փողի մասին աւելորդ ա,
 Մեր մէջ խօսելն էլ ամօթ ա,
 Ի՛նչ մեծ բան ա, տօ՛ հէ՛ր օրհնած,
 Միա՛յն, միա՛յն, մի զդակի վարձ:
 Ուրբաթ օրը քեռի Քուչին
 Ուստից առաջ բաց-բաց կուճին⁴
 Թափ թափ տալով՝ ծանդըր ու մեծ
 Ուստա կատուի շէմքում կանգնեց:

¹ Ճոն. գլխարկ շինող կամ դերձակ:

² Որդիանց որդի. (ո՛ր դիէն ո՛ր դի) ուրտեղէն ուր, չեմ
 գիտեր ուսկից:

³ Համա. բայց, միայն թէ:

⁴ Կուճ. ճաղատ, հերթաթափ գլուխ:

— Ուստէն ո՞ւր ա... փափախս⁵ ո՞ւր ա...
— Մի քիչ կացի — հրէս⁶ կերեւայ:

Բ

Ուստէն եկաւ քուրքը հադին,
Շանը տեսաւ, բեղի⁷ տակին
Իրեն—իրեն քիչ փրնթփրնթաց,
Ու մուշտարու⁸ վրայ թընդաց:
— Յուրտը տարա՞ւ... վա՛հ, տընաշէն,
Ձեռ թող անում մի շունչ քաշեն.
Ջեշտ բան հօ չի՞, հըլա նոր եմ
Յըրցամ⁹ տըւել, թէ որ կարեմ:
— Դէ հէ՛ր օրհնած, էտէ՛նց ասա,
Էդ բարկանալդ էլ քնչի՛ս ա:
Փող եմ տըւել, վախտին կարի,
Թէ չէ՛ ասա, էդուց արի:
Համ ասում ես, համ չես կարում,
Համ խօսում ես, վըրէս դռում,
Հա՛մ, հա՛մ, հա՛մ, հա՛մ,
Քանի՞, ախպէր դընամ ու դամ...
Ասաւ Քուչին ու նեղացած
Վերադարձաւ դըլուխը բաց:

Գ

Մին էլ եկաւ, դարձեալ չըկար.
Էս անդամը դիպան իրար.
Էլ անպատիւ, անկարգ խօսքեր,
Էլ հին ու նո՞ր, էլ հէրն ու մէ՛ր,

5 Փափախ (թրք.). գլխարկ:

6 Հրէս (հրէն). ահա, ահաւասիկ այս (այն), այստեղ եւն.:

7 Բեղ. պեխ, պերեւեշտ, քնացք:

8 Մուշտարի (թրք.). յաճախորդ:

9 Յըցամ տալ. ջուր սրսկել, թրջել:

էլ դող Փիսօ՝, էլ քաջալ¹⁰ Շո՛ւն...
 Քանիւ հասաւ դիւանբաշուն¹¹ :
 Շունը մինչեւ գընաց, եկաւ,
 Ուստա Կատուն կոտորէն¹² ընկաւ,
 Գըլուխն առաւ ու մի գիշեր,
 Հայդէ՛. կորաւ. էն կորչիւն էր...

Դ

էն օրւանից մինչեւ օրս էլ
 Շունն էս բանը չի մոռացել.
 Մըտքում հըլա դեռ պահում ա.
 Որտեղ Կատին պատահում ա,
 Վեր ա թըռչում, վըրայ վազում,
 Իրեն մորթին ետ ա ուզում,
 Իսկ սեւերես Կատուն յանկարծ
 Ետ ա դառնում ու բարկացած
 Փըշտացնում ա. մըթամ¹³ նոր եմ
 Ցըրցամ տըւել, թէ ուր կարեմ :

1886

¹⁰ Քաջալ (թրք.). ճաղատ :

¹¹ Դիւանբաշի (այրսկ.). գատաւոր (դիւանի կամ ատեանի պետ) :

¹² Կոտորն ընկնել. սնանկանալ :

¹³ Մըթամ (միթամ). իրբեւ թէ :

Ա Խ Թ Ա Մ Ա Ր

Ծրձաղախիտ Վանայ ծովի
Փոքրիկ գիւղից առափնեայ
Ծովն է մըտնում գաղաղողի
Ամեն գիշեր մի տըղայ:

Ծովն է մըտնում, առանց նաւակ,
Բազուկներով առնացի
Ջուրը ճողփում, լող է տալի
Դէպի կըղզին դիմացի:

Խաւար կըղզուց պարզ ու պայծառ
Մի լոյս կանչում է նըրան,
Մի վառ փարոս նըրա համար,
Չըմոլորի իր ճամբան:

Սիրուն թամարն ամեն գիշեր
Այնպէս կըրակ է անում,
Եւ ըսպասում է անհամբեր
Այնտեղ՝ մօտիկ դարանում:

*
* *

Ծըփում է ծովն ալեծածան,
Ծըփում է սիրտը տըղի.
Գոռում է ծովն ահեղաճայն,
Նա կըռւում է կատաղի:

Եւ թամարը սըրտատըրդի.
Արդէն լըսում է մօտիկ
Ջըրի ճողփիւն, ու ողջ մարմնով
Սիրուց այրւում է սաստիկ:

Լըռեց: Ծովի խաւար ափին
Կանգնեց սեւ-սեւ մի ըստուեր...
Ահա եւ նա... իրար գըտան...
Կասկածաւո՞ր լուռ գիշեր...

Միայն ալիքը Վանայ ծովի
Մեղմ գիպչում են ափերքին,
Հըրհըրելով հեռանում են
Ծըշունջներով անմեկին:

Նըրանք ասես փրսփըսում են...
Ու ասողերը կամարից
Ակնարկելով բամբասում են
Լիրբ, անամօթ թամարից...

Բամբասում են կուսի սըրտում...
Ժամ է արդէն... ու կըրկին
Մինն ալեկոծ ծոփն է մըտնում,
Միւսն աղօթում եղերքին...

*
* *

«Ո՞վ է ջահիլ էն խիղախը,
Որ հէնց հարբած իր սիրով,
Սըրտից հանած ահն ու վախը
Ծոփն անցնում է գիշերով:

Ծոփն անցնում է միւս ափերից
Մեր թամարին համբուրում...
Աղջիկ խըլի նա մեր ձեռի՛ց...
Ինչի տեղ է մեզ գընում...»

Էսպէս ասին վիրաւորած
Կըղզու միջի ջահիլներ
Ու թամարի ձեռքով վառած
Լոյսը հանդգրին¹⁴ մի գիշեր:

Մոլորեցաւ խաւար ծովում
Լուղորդ տըղան սիրահար,
Ու բերում է հողմը, բերո՛ւմ
Հառաչանքներն — «Ախ, թամար...»

¹⁴ Հանգցրին (հանդցնել)․ մարեցին:

Մօտ է ձայնը. խօլ խաւարում,
 Ժայռերի տակ սեպացած,
 Ուր ամենի ծոփն է դոռում,
 Մերթ կորչում է խըլացած
 Ու մերթ լըսում ուժասպառ,
 «Ա՛խ, Թամա՛ր...»

*
 * *

Առաւօտեան ծովը ծրփաց,
 Ափը ձրգեց մի դիակ,
 Նըրա չուրթին, պաղ, կարկամած
 Ասես, մեռած ժամանակ
 Սառել էին երկու բառ.
 «Ա՛խ, Թամա՛ր...»

Այն օրեանից սըրա համար
 Կըղզին կոչեց «Ախթամար»:

1891

ՓԱՐԻԱՆԱ

Ա

Բարձրագահ Արուըն ու Մըթին սարեր
 Մէջք մէջքի տըւած կանգնել վեհափառ,
 Իրենց ուսերին, Ջաւախքից էլ վեր՝
 Բըռնած պահում են մի ուրիշ աշխարհ:

Ասում են՝ էնտեղ, արծըլի նրման,
 Ծիծղուն, կապուտակ երկընքի ծոցում,
 Նըստում էր էն սէգ սարերի արքան
 Իրեն Փարանայ ճերմակ ամրոցում:

Փարանայ արքան մի աղջիկ ունէր,
 Ու ոչ մի որսկան դեռ իրեն օրում
 Էնքան դեղեցիկ եղնիկ չէր տեսել՝
 Իր որսն անեղիս Մըթին սարերում:

Աշխոյժ մանկութեամբ զարդարում էր նա
Ծերութեան օրերն ու սարերն իր հօր,
Ու ապրում էր ծեր արքան Փարւանայ
Իրեն էն քընքուշ ծաղկով բախտաւոր:

Մեծ բախտը սակայն առջեւըն էր դեռ:
Եկաւ էն օրն էլ հասաւ երջանիկ,
Ու զըրկեց արքան ուրախ դեսպաններ
Ամեն մի ամբոյց, ամեն արքունիք:

— Ո՛րտեղ է, ասաւ, էն քաջը, թէ կայ,
Իմ չընաշխարհիկ, դըստերն արժանի,
Թող առնի իր ձին, իր զէնքն ու զըրահ,
Գա՛յ, ցոյց տայ իրեն, իր բախտը տանի...

Բ

Հաղած, կասած զէնք ու զըրահ,
Զիանք հեծած ամեհի,
Ահա եկել հաւաքել են
Կըտրիճները Կովկասի,
Ծեր Փարւանայ թաղաւորի
Ապարանքի յանդիման
Կազմ ու պատրաստ սպասում են
Մօտիկ ժամին մըրցութեան:
Ըսպասում է ողջ աշխարհքը՝
Եկած, կիտած Փարւանա,
Թէ ո՞ր կըտրիճն արդեօք պիտի
էն սիրունին տիրանայ:

*
* *

Հընչեց փողը: Ահա փունջ-փունջ
Դըրանիկներ, նաժիշտներ,
Ահա աղջիկն իր նաղելի
Ու թաղաւորն ալեհեր:
Հայրը ինչպէս մըռայլ մի ամպ,
Աղջիկն անուշ մի լուսին,

Ամպ ու լուսին իրար փարւած՝
Դուրս են դալի միասին:
Հառաչում է ողջ աշխարհքը,
Կրտրիճները, քարացած,
Երազների մէջ են ընկնում՝
Էս աշխարհքից վերացած:

*
* *

— Նայի՛ր, դըստրի՛կ, իշխանազուն
Էս քաջերին լայնալանջ,
Այժմ պիտի հանդէս դուրս գան,
Պայքար մըտնեն քո առաջ.
Մէկը իրեն ուժը ցոյց տայ,
Միւսը շընորհքն իր բազկի,
Որը ճարպիկ ձիարշաւը,
Որն էլ թափը իր վաղքի:
Իսկ երբ կըռնեն առնի դադար,
Յայտնի լինին քաջն ու վատ,
Ու երբ անցնեն մեր առջեւից
Կրտրիճները պայազատ,
Ընտրի՛ր, դարկի՛ր ձեռքիդ խնձորն
Անյաղթներից անյաղթին,
Որ ողջ աշխարհ մայիլ¹⁵ մընայ
Անդուպական քո բախտին:

*
* *

Ասաւ արքան, ձեռքը ձրկեց,
Նըշան տրւաւ պայքարին,
Այն ինչ՝ աղջիկն առաջ եկաւ՝
Կարմիր խնձորն իր ձեռին:
— Գուցէ, հայրի՛կ, տկար լաւին
Յաղթէ մի վէս տըմարդի,
Բայց չի կարող լինել երբեք
Նա սիրելին իմ սըրտի. . .

¹⁵ Մայիլ (մընայ). զմայլի, զարմացած մնայ:

— Էյ Փարւանայ, չըքնաղ փէրի,
 Ի՞նչն է հաւան քո սըրտին, —
 Խըռնըւում են կըտրիճները,
 Խընդըում կըրկին ու կըրկին:
 Գա՞նձ ես ուզում, ոսկի՞, արծա՞թ,
 Անգին քարեր ու դոհա՞ր,
 Ա՞ստղ ես ուզում, էլ երկընքից
 Վէ՛ր¹⁶ կը բերենք քեզ համար:
 — Ինչի՞ս են պէտք ոսկին, արծաթ
 Եւ կամ աստղը երկընքի:
 Ոչ էլ դոհար եմ պահանջում
 Սէր-ընկերից իմ կեանքի:
 Ես նըրանից հուր եմ ուզում,
 Անշէջ հուրը սրբազան,
 Ով կը բերի անշէջ հուրը,
 Նա է ընտրած իմ փեսան...

*
* *

Ասաւ աղջիկն, իրար անցան
 Կըտրիճները քաջարի,
 Ձիանք հեծած թրուան հապճեպ
 Դէպի չորս կողմն աշխարհի.
 Թրուա՞ն, չուտով դըտնեն, բերեն
 Անշէջ հուրը աղջրկան
 Բայց... տարիք են դալի՞ս, դնո՞ւմ,
 Նըրանք չըկան ու չըկան:

*
* *

— Հայրի՛կ, ինչո՞ւ ետ չըդարձան
 Էն քաջերը սիրատենչ.
 Մի՞թէ, հայրի՛կ, ինձ մոռացան,
 Էլ չեն բերի հուրն անշէջ:

¹⁶ Վէր. վար (վայր-վէր): — Բոլոր տպագրութիւնները «Վէր»
 ունին, բացի Կ. Պոլիս տպուածէն որ «վար» ունի՝ անչուշտ
 սխալումով:

— Ո՛րչ, իմ դըստրիկ, կըզան անշուշտ
Ու կը բերեն էս տարի:
Կըռիւնեցով արիւնըռուշտ
Լիքն է ճամփէն քաջերի:

Ո՛րվ իմանայ, պէտք է անցնեն
Մութ աշխարհքից, սեւ ջրից.
Ո՛րվ իմանայ, պէտք է փախցնեն
Եօթ դըլխանի դեւերից:

Անց է կենում դարձեալ տարին:
Նայում է կոյսն ամեն օր.
— Ո՛րւր է, հայրի՛կ, ե՞րբ կըզայ նա,
Սարից թըռած ձիաւոր:

Միշտ երազում ես տեսնում եմ
էն հերոսին ասպառայ,
Հուր կարօտով թըռած իմ դէմ,
Լուսանում է... ու չըկայ:

— Կըզայ, դըստրի՛կ իմ թանգադին
Հեշտ չի բերւում հուրն անշէջ.
Շատ—շատ անգամ բերող հողին
Ինքն է այրւում նըրա մէջ...

Անց է կենում դարձեալ տարին:
Նայում է կոյսն ամեն օր.
Ոչ մի սարից, ոչ մի ճամփում
Զի երեւում ձիաւոր:

— Հայրի՛կ, հայրի՛կ, մի՞թէ չըկայ
էս աշխարհքում անշէջ հուր,
Թառամում է սիրտըս ահա՛,
Պաղ է այս կեանքն ու տըխուր...

Էլ չի խօսում. մռայլ տըրտում,
Լուռ է արքան ալեւոր,
Սեւ-սեւ ցաւերն իրեն սըրտում՝
Միտք է անում դըլխակոր:

Դ

Էսպէս անցան շատ տարիներ .
 Տըխուր աղջիկն արքայի
 Նայե՛ց, նայե՛ց սարերն ի վեր ,
 Ճամփաներին ամայի ,
 Յոյսը հատաւ . . . ու լաց եղաւ .
 Էնքա՛ն արաւ լաց ու կոծ ,
 Որ լիճ կըտրեց արտասուքը ,
 Ծածկեց քաղաքն ու ամրոց .
 Ծածկե՛ց, կորա՛ն, ինքն էլ հետը . . .
 Այժմ էնտեղ տըրտմաշուք
 Խոր փարւանայ լիճն է ծրփում ,
 Յըստա՛կ, ինչպէս արտասուք ,
 Ու էն վճիտ ջրերի տակ
 Յոյց են տալի մինչ էսօր
 Ծեր արքայի ճերմակ ամրոցն
 Ու շէնքերը փառաւոր :

*
* *

Ասում են, էն թիթեռները ,
 Որ դիշերայ խաւարում ,
 Որտեղ ճըրագ , որտեղ կըրակ ,
 Որտեղ լոյս է հէնց վառւում ,
 Հաւաքւում են, շուրջը պատում ,
 Մէջն են ընկնում խելադար ,
 Ասում են, թէ՛ էն փարւանայ
 Ջահիլներն են սիրաւառ :
 Ըշտապելուց թեւ են առել ,
 Դարձել թեթեւ թիթեռներ ,
 Ու տակաւին հուր տեսնելիս՝
 Մէջն են ընկնում անհամբեր .
 Ջանք է անում ամեն մինը
 Շուտով տանի, տիրանայ . . .
 Ու այրւում են, այրւում անվերջ
 Կըտրիճները փարւանայ :

ԼՈՒՍԱԻՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

Կէս դիշերին կանթեղը վառ
Կախ է ընկած երկընքից,
Լուսաւորչի կանթեղն անմար
Հայոց մըթնած երկընքից:

Կախ է ընկած առանց պարան
Արագածի կատարին,
Ու սեղանից հըսկայական
Լոյս է տալիս աշխարհին:

Լոյս է տալիս երկա՛ր դարեր,
Ու վառուում են միշտ անչէջ
Սուրբի մաքուր արցունքները
Իւղի տեղակ¹⁷ նորա մէջ:

Ոչ մարդկային ձեռ կը հասնի
էն ահաւոր բարձունքին,
Եւ ոչ քամին կը հանդգընի՝
Վիշապ-քամին ահադին:

Երբ պատում է մութ խաւարը
Չընաշխարհիկ մեր երկրին,
Երբ տիրում է ահն ու վախը
Թոյլ, կասկածոտ սըրտերին,

Ով անմեղ է, լիքը սիրով
Ու հաւատով անսասան,
Ով նայում է վառ յոյսերով
Դէպի Հայոց ապագան —,

Նա կը տեսնի էն մըշտովառ
Ջահը կախւած երկընքից,
Ասես՝ Աստծոյ աչքը պայծառ
Հըսկում է ցած երկընքից:

1902

¹⁷ Տեղակ. տեղը, փոխանակ:

ՄԻ ԿԱԹՈՒԼ ՄԵՂՐԸ

Մի գիւղացի իրենց գիւղում
 խանութ սարքել, բան էր ծախում :
 Օրւան մի օր մօտիկ գիւղից ,
 Մահակն ուսին , շունն ետեւից
 Ներս է մըտնում մի զըռ¹⁸ չորան .
 — Բարի օր քեզ , ա՛յ խանութսւան ,
 Մեղրը չունե՞ս ,
 Մի քիչ տաս մեզ :
 — Ունեմ , ունեմ , չորան ախպէր .
 Ամանդ , ո՞ւր է , ամանդդ բեր ,
 Ինչ տեղից որ ինքդ կուզես ,
 Էս սըհաթին քաշեմ տամ քեզ :

Էսպէս հանգիստ , էսպէս սիրով ,
 Մեղրից անուշ լաւ խօսքերով
 Մեղր են քաշում . մին էլ յանկարծ
 Մի կաթ մեղրը ծորում է ցած :
 — Տը՛ղղ , էն կողմից մի ճանճ գալի ,
 Էս կաթիլին վեր է գալի :
 Ճանճի վըրայ , Թաքուն—Թաքուն ,
 Էս խանութի տիրոջ կատուն
 Դուրս է ցատկում ,
 Թաթով դարկում . . .

Բայց հէնց կատուի ցատկելու հետ
 Հովւի շունը խկոյն եւ եթ
 ՀաՖ է անում ,
 Վեր է կենում ,
 Ոնեղճ փխիկին
 Դընում տակին
 Ձեռաց խեղդում
 Ու շըպըրտում :

18 Ձըռ. (զեռ) . մեծ , վիթխարի , հսկայ :

«Խեղդե՛ց, խեղդե՛ց, վա՛յ, իմ կատուն.
Ա՛յ սատկես դու, շան որդու շուն»,
Բարկանում է խանութպանը
Ու ձեռն ընկած մօտիկ բանը
Տուր՝ թէ կըտաս շան ճակատին,
Շուռ¹⁹ է տալի կատուի կողքին:

— Վա՛յ, ձեղ մատա՛ղ, ասլան շունըս,
Իմ ասլո՛ւստը, տե՛ղըս, տո՛ւնըս...
Տունըդ քանդուի, ա՛յ խանութպան,
Անխիղճ, լիբբ, չար, Փըլան, Փըստան,²⁰
Ո՞նց թէ դու իմ շանը զարկե՛ս,
Դէ, զարկելը հիմի դու տես...
Գոռում է մեր աժդահակը²¹,
Մեծադըլուխ իր մահակը
Ետ է տանում ու ցած բերում,
Խանութպանին շէմքում փրոում:

— Ըսականեցի՛ն... հա՛յ, օղնութի՛ւն...
Ու թաղից թաղ, ու տանից տուն
Ձէն է տալի մէկը միւսին,
— Հա՛յ, օղնութի՛ւն... ըսականեցի՛ն...

Վերի թաղից, ներքի թաղից,
Ճամփի վերից, դործի տեղից,
Ճիչով, լալով,
Հարայ տալով —
Էլ հէրն ու մէր,
Քիր²² ու ախպէր,
Կին երեխէք,
Ընկեր տըղէք,

¹⁹ Շուռ (տալ). շրջել, դարձնել (դարձնել):

²⁰ Ֆըլան, ֆըստան. ախինջ, ախինջ:

²¹ Աժդահակ կամ աժդահա. հսկայ, վիթխարի:

²² Քիր. քոյր:

Զոքանչ, աներ,
Քաւոր, սանհէր
Քեռի, փեսայ...
Ինչ իմանաս էլ՝ ով է սա,
Գալիս են ու անվերջ դալիս,
Ով դալիս է՝ տուր թէ տալիս.
— Տօ՛, կոսկիտ արջ, տօ՛, վայրենի,
Էս տեսակ էլ բա՞ն կրլինի.
Դու առուտուր եկար անես,
Թէ՞ իր չէմքում մարդ ըսպանես...

Մին ասում են — տասը դարկում,
Աղցան անում, մէջտեղ ձրդում
Իր շան կողքին երկար ու մէկ:
— Դէ՛, ձեր մեռելն եկէք տարէք:
Ու էստեղից բօթը զընում,
Գընում մօտիկ գիւղն է հասնում.
— Հէ՛յ, օգնեցէ՛ք,
Մեռած հօ չէք,
Ըսպանեցին մեր գիւղացուն...

Ինչպէս շընաճանճի մի բուն
Քանդես, թողնես,
Էն ճանճի պէս
Ամբողջ գիւղով օրդու²³ կապում,
«Քո՛ւհ» են անում. դուրս են թափում
Ամեն մինը առած մի բան.
Որը ձեռին մի հրացան,
Որը եղան²⁴, ցաքատ²⁵ կամ սուր,
Որը թի, բահ, որը շամփուր,
Որը կացնով, որը փէտով,
Որը ձիով, որը ոտով,

²³ Օրդու (թրք.) դունդ, բանակ (զօրքի):

²⁴ Եղան. երկթանի զօրծիք խոտն ամփոփելու:

²⁵ Յաֆատ. յօտոց, կեռ մեծ դանակ՝ ցախ ու բարակ ծառեր
կտրելու:

Որն անդըդակ, որը բորիկ —
Դէպի դուշման գիւղը մօտիկ:
— Տօ', էսպէս էլ անիրաւ դե՛ւղ.
Ոչ խիղճ ունեն, ոչ ահ—երկիւղ.
Մարդ գընում է առուտուրի
Հաւաքում են քաշում սըրի:
Թո՛ւ ձեր դեղին, միջի մարդին,
Ձեր նամուսին²⁶, ձեր ագաթին²⁷...

Գընա՛նք, զարկե՛նք,
Ձարդե՛նք, կրակե՛նք...
— Հա՛յ, հո՛ւյ, յառա՛ջ, դէ՛, ձեզ տեսե՛մ...

Ու դուրս եկան իրարու դէմ:
Հա՛ զարկեցին ու զարկեցին,
Կոտորեցին, կըրակեցին.
Ինչքան աւել կոտորեցին,
Էնքան աւել կատաղեցին,
Ձարդեցին իրար,
Ձընջեցին իրար,
Կորան, գընացին
Գետնին հաւասար:

Դու մի՛ ասել, մէկը մէկից
Էսքան մօտիկ, սահմանակից
Էս գիւղերը հարկ են տալի
Ամեն մի՛նը մի արքայի:
Մի տէրութեան թագաւորը,
Երբ լըսում է էս՝ բոլորը,
Արձակում է հըրովարտակ
Ժողովրդին իր հըպատակ.
— Յայտնի լինի մեր տէրութեան,
Ձինւոր, բանւոր, ագնըւական —
Ամեն շարքին
Ու աշխարհքին,

²⁶ Նամուս (թրք.)՝ պատիւ, արժանապատուութիւն:

²⁷ Ագաթ (թրք.)՝ սովորութիւն, եղանակ, կերպ:

Որ անօրէն ու դաւաճան
Մեր դրացի աղղը դաժան,
Երբ մենք քնած էինք սիրով,
Մեր սահմանը մըտաւ զօրով,
Ու կոտորեց սուրը ձեռին
Մեր սիրելի դաւակներին:
Արդ սըրահար ու հըրակէզ
Մեր որդիքը կանչում են մեզ,
Եւ մենք, ընդդէմ մեր խկ կամքին,
Պատէր տըւինք մեր դանակին,
Թընդանօթով մեր աւերող
Ու Աստուծով մեծակարող,
Յանուն արդար ու սուրբ ոխի
Մըտնի հողը մեր ոստիսի:

Միւսը նոյնպէս իրեն հերթին²⁸
Գըրեց զօրքին, ժողովըրդին.
— Մարդկանց առաջ եւ Աստուծու,
Բողոքում ենք մեր դըրացու
Վարմունքի դէմ եւ չար, եւ նենդ,
Որ՝ ոտքելով ամեն օրէնք,
Բորբոքում է կըռիւ եւ վէճ
Հին հարեւան աղղերի մէջ,
Քանդում սիրոյ դաշը կապած:
Արդ՝ ահամայ մենք ըստիպւած,
Յանուն պատւի, արդարութեան,
Յանուն թափւած անմեղ արեան,
Յանուն ազատ մեր աշխարհքի,
Յանուն Աստծու եւ իր փառքի —
Բարձրացնում ենք մեր ձայնն ահա
Ու մեր սուրը նորա վըրայ:

Ու ըսկսեց կըռիւն ահեղ:
Շօինդ, որոտ հստեղ, հնտեղ:

²⁸ Հերբ. կարգ (իւր կարգին):

Կըրակն ընկաւ շէն ու քաղաք,
Արիւն, աւեր, ճիւղ, աղաղակ,
Ամեն կողմից սարսափ ու բոթ,
Ամեն հողմից²⁹ մեռելի հոտ...

Ամառ, ձմեռ,
Ողջ տարիներ
Մըշակն անբան,
Դաշտերն անցան,

Ու, կըռիւր չըղադարած,
Սովը եկաւ համատարած:
Սովը եկաւ—սովի հետ ցաւ.
Ծաղկած երկիրն ամայացաւ...
Իսկ մնացած մարդիկ իրար
Հարցնում էին սարսափահար
Թէ ո՞րտեղից արդեօք ծաղեց
Էս ընդհանուր աղէտը մեծ:

1909

ԱՂԱՒՆՈՒ ՎԱՆՔԸ

ԱԶԳԱՅԻՆ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ

Լէնկթէմուրն եկաւ, հուրն ու սուրն եկաւ,
Անօրէնն եկաւ, եկա՛ւ ու եկա՛ւ.
Հաւաքեց կիտեց³⁰ մեր ազգը Հայոց,
Փաթաթեց, պատեց, ինչպէ՞ս վիշապ-օձ,
Կանգնեց Սեւանայ ափին հովասուն,
Էնտեղ, ուր՝ ուշքը ու միտքն Աստըծուն՝
Անհունն է խորհում, մեռնեմ իր զօրքին,
Օհաննայ վանքը ծովի եզերքին:


²⁹ Հողմից. Երեւանեան կրկին տպագրութիւնները (1926 եւ 1934) ունին կողմից. մինչ Կ. Պօլսի տպ.ը հողմից որ ուղիղ ձեւն ըլլալու է՝ համեմատ իմաստին եւ զանազանութեան:

³⁰ Կիտել. ժողովել, հաւաքել:

էն վանքում, Հայոց աղէին սահապան,
Աղօթք էր անում ծերուկ հայր Օհան.
Աղօթք էր անում իր հոգու համար,
Իր աղէի համար, աշխարհքի համար:
Երբ տեսաւ խաղաղ վանքիցը իրեն
Անօրէն մարդու էս գործն անօրէն,
Խըռովեց արդար ծերունու հոգին.
Ճերմակ միրուքով, իր ցուպը ձեռքին,
Դառնացած, դըժգոհ մարդուց ու կեանքից,
Աղօթքը կիսատ դուրս եկաւ վանքից,
Իջաւ Սեւանայ երեսը կապոյտ,
Ու քըրթմընջալով, միամիտ, անխոյժ,
էն վէտ-վէտ, ծրփուն ջրերի վըրայ
Յամաք ոտներով դնում էր ահա:
Տեսաւ հըրաշքը Լէնկթէմուրն ափից,
Տեսաւ, սասանեց տեղը սարսափից:
Կանչեց, աղաչեց իշխանը թաթար.
— Ե՛տ արի, ասաւ, ե՛տ արի, արդա՛ր,
Ե՛տ արի, ասաւ, ո՛վ դու Աստծու մարդ:
Ետ եկաւ մեր հայր Օհանը հանդարտ,
Իր ցուպը ձեռին, ջրերի վըրով,
Ու առաջն ելաւ թաթարը սիրով:
— Ի՞նչ ես ուզում դու, ո՛վ սուրբ ալեւոր,
Գա՞նձ, իշխանութի՞ւն, թէ կեանք փառաւոր...»
— Քո փառքն ու դանձը հարկաւոր չեն ինձ,
Իմ ժողովուրդն եմ ուզում ես քեզնից:
Ուզում եմ թողնես՝ դընան ուր կուզեն,
Ու ազատ իրենց կեանքի ձէնն ածեն
էս լէն աշխահքում, արեւի տակին...»
Ասաւ սուրբ մարդը մեծ աւազակին:
— Ժողովուրդ կ'ուզե՞ս... լա՛ւ, լինի, էդպէս:
էս վանքովը մին ժողովուրդ տամ քեզ,
Գընա ինձ համար աղօթք արա, ծե՛ր:»
Ասաւ Լէնկթէմուրն ու տըւաւ սլառէր,
Որ դերի Հայոց աղդը մի թեւից
էն վանքը մըտնի սուրբի ետեւից,
Ինչքան ժողովուրդ մըտնի էն վանքը,
Նըրան է բաշխում էնքանի կեանքը:

Հըրաման արաւ իրեն զօրքերին
 Ու բաց թողեցին հայ աղէի գերին :
 Մըտնում է գերին, մըտնում մի ծէրից ,
 Անցել է թիւը հարիւր հազարից ,
 Ձի լըցւում սահայն հասարակ մի վանք...
 Ասլշում է թաթարն — արմա՛նք ու դարմանք :
 — Թողէ՛ք, կանչում է իրեն զօրքերին ,
 Յորձանք է տալի նորից հայ գերին :
 Գալիս է գերին, գալիս է նորից ,
 Անցել է թիւը հազար հազարից ,
 Ձի լըցւում սահայն էն վանքը կըրկին ,
 Ձի կանդնում հայի հոսանքն ահաղին :
 Երբորդ անդամն է կանչում զօրքերին :
 Գալիս է անցնում մընացած գերին :
 Անցնում է գերին, անցնում շարէշար ,
 Էլ մարդ չըմնաց, դընա՛ց ինչ որ կար ,
 Դատարկ է սահայն վանքը տակաւին...
 Թէմուր դարհուրած դառնում է չորս գին .
 — Ձարթո՞ւն եմ արդեօք, թէ երազ տեսայ...
 Յայտնեցէք ինձ չո՛ւտ, ի՞նչ հըրաշք է սա...»
 Գընում է տեսնում մարդիկն իր զըրկած —
 Մեր հայր Օհանը՝ աղօթքի չոքած ,
 Աչքերն երկընքին, միբուքն արցունքոտ .
 Ով որ հայ աղէից մըտել է իր մօտ ,
 Իր սուրբ աղօթքով, կամքով վերինի ,
 Փոխել է իսկոյն, դարձրել աղանի ,
 Բաց պատուհանից թողել ամենքին ,
 Թըոցրել գէս իրենց լեռները կըրկին ,
 Ու հիմի վանքում էլ չըկայ ոչոք ,
 Ինքն է աղօթում մենակ, ծընկաշոք :

1902



ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ - ԷՆՔԵԱԹՆԵՐ

ԳԱՐՈ ԲԻՉՈՒ ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

Ես ու Գարօ բիձէն անցնում էինք Լօռու ձորով:

— Հէ՛յ, տիրացու — ձայն տւաւ նա:

— Համմէ:

— Հրամանդդ շատ: Ես տեսնում եմ, որ էս մեր նոր ուսում առածները շատ աշխարհքից դուրս մարդիկ են, դու սրան ի՞նչ կ'ասես:

— Ինչո՞ւ, Գարօ բիձա:

— Նրա համար, որ հէնց դիտեն՝ ամեն բան իրենք են հասկանում, իրենցից առաջ էլ ոչ մարդիկ են եղել, ոչ բան են հասկացել: Մին էլ կտեսնես բռնեցին ու դիտիդ դէլի աւետարան կարդացին — հա՛ էս ճանճ պահի՛ր, էս արեւշուժի² ճիճու պահի՛ր, էսպէս մաժուն շինի՛ր, էսպէս ցանի՛ր, էսպէս հնձի՛ր... Տօ, հէր օրհնած, մի առաջ հարցրո՛ւ, տես՝ էդ բաները դրանք էլ միտք են արել թէ՛ չէ, նրանից յետը՝ թէ՛կող ուշուց³ տուր:

— Ետոյ մի՞տք էք արել որ, Գարօ բիձա:

— Ախպէր, ա՛յ, ես հիմի օրինակի համար՝ մինն ասեմ, դու տես՝ մենք էլ հացակեր մարդիկ ենք, բան ենք հասկանում թէ՞ չէ: Մի աշունք մեր Դաւոն դնաց քաղաքը խող ծախելու: Մի ճանանչ մարդ արեւշուժի ճիճւի սերմ էր տւել թէ՛ տարէք ձեր տեղը առաջ բերէք: Ծամկայ պահեցինք մինչեւ դարունքը բաց կ'ու: Գարունքը որ բաց էլաւ, ոնց որ խրատ էր տւել՝ էս ճիճւի սերմը բե-

1 Բիձա. ծերունի:

2 Արեւշուժ. մետաքս:

3 Ուշուց կամ յուշուց. յիշոց, նախատական խօսք:

ընք մեր խիզանի՜ ծոցում դրինք, որ տաքանան, դուրս գան: Դուրս եկան ասեղի ծէրի չափ մանր սեւ զաղեր⁵:

Տիրացո՛ւ:

— Համմէ:

— Էդ ձեր ուսումնականները թէ գիտեն — արբեշումի ճիճուն ի՞նչ կուտի:

— Թխան տերեւ:

— Սպրե՛ս. դրուստ⁶ ա: Գնացի ձորիցը մի շալակ թխան տերեւ բերի, կապեցի մենծ տան ամբարի ոտիցն ու ճիճուն վրէն ածի: Ինչքան մարդ եկաւ նայելու, ոչ ոքի տուն չը թողինք՝ որ աչքով չը տան⁷, ասինք՝ թող մի տեսնենք ինչ ա դուրս գալի: Ա՛յ տղայ, էդ անտէր ճիճուները մի քանի օր կացան ու կոտորեցին: Հիմի թէ՛ ասենք նրանի՞ց էր, որ դո՛ւ ձագը շատ էր մօտ կապած, ոտնատակ էր տալիս, թէ նրանի՞ց էր, որ հաւերը տուն էին թափում՝ կոցահարում. դէ ո՞նց անենք: Շօ չէինք կարող հաւերը կոտորել կամ ձագն սպանել: Թէ ասենք անձրեւիցն էր, որ երդիկովը ներս էր թափւում, մին էլ մարդ միտք ա անում, թէ բա քաղաքումն անձրեւ չի գալի՞... Մի խօսքով՝ բան գլուխ չեկաւ: Տեսանք, որ մեր երկրումը արբեշումի ճիճուն անում չի, բան չի դառնում: Դէ՛, դարմանալու ի՞նչ կայ որ. էնպէս երկիր կայ՝ հաւք չի սպրում, էնպէս երկիր կայ՝ ցորեն չի դուրս գալի. ամեն աշխարհք մի տեսակ բնութիւն ունի. բայց էս մեր նոր ուսում առածները էսքանն էլ չեն հասկանում:

1899

4 Խիզան. կին, ամուսին, ընտանիքի իգական սեռի անդամները:

5 Զադ. բան:

6 Դրուստ. ուղիղ, ճշմարիտ:

7 Աչքով տալ. աչք ընել, հմայել, կախարդել:

ՆԵՍՈՅԻ ՔԱՐԱԲԱՂՆԻՍԸ⁸

Կիրակոսը մտնել էր, անկողին էր ղնկել, տանջւում էր տաքութեան մէջ: Հարեւանները հիւանդի շուրջը հաւաքւած օդէն լիքը զրոյց էին անում, չիրուխ քաշում:

— Տղէ՛ք, սա որ քրտնի ոչ, բան չի դառնալ, եկէք սրան մի քարաբաղնիս անենք, — ծխի միջից առաջարկեց Նեսո բիճէն:

— Հա, էդ խելքս կտրեց, — հաւանութիւն տւեց մի ուրիշը:

— Դրան էլ ուրիշ ճար չկայ, — ձէն տւին էս ու էն կողմից:

— Կիրակո՛ս...

— Հը՛՛:

— Ասում ենք քարաբաղնիս անենք, ի՞նչ ես ասում:

— Վախենում եմ... չգիմանամ...

— Տօ՛, կղիմանաս, երեխայ հօ չե՛ս:

— Դէ... դուք գիտէք... ձե՛ղ... մատաղ:

— Ա՛ղջի, պղինձը՞ ջուր լցրէք բերէք. մի փէշ էլ քար բերէք կրակն ածենք տաքանան:

Պղինձը դրին կրակին, քարերն ածին կրակի մէջ ու նստեցուցին: Նեսո բիճէն սկսեց պատմել, թէ քանի քանի հողի են աղատուել քարաբաղնիսով, Մատնանց Դանէլը, Մաթոսանց Մինասը, Ծատուբանց Ստեփանը, Մաշկաւորանց Միկոն — մինչեւ որ ջուրն եփ եկաւ, քարերն էլ կարմրեցին:

— Դէ ժամանակն ա, վե՛ր կացէք:

— Տղէ՛ք, վախում եմ... կանչեց հիւանդը:

— Դու սուս կաց: Աղջի, մի երկու հաստ լեհեր¹⁰ բերէք, մի չորս ու հինգ ուժով տղէք էլ եկէք էստեղ:

Շորերով փաթաթւած եռման ջրով լիքը պղինձն ու հիւանդին դրին իրար հետ, կարմրած քարերը լցրին ջրի մէջ. քարերը թշալցին, ամպի նման դոլորչին սկսեց բարձրանալ, չտապով վերմակները ծածկեցին ու չորս կողմից վրէն նստտեցին:

— Վա՛յ, խեղդւեցի, — խուլ դռում էր հիւանդը:

⁸ Քարաբաղնիս. քարէ բաղնիք:

⁹ Պղինձ. կաթսայ:

¹⁰ Լեհեր կամ Լեխեր. վերմակ:

— Խեղդւիլ չես... տղէք պինդ նստեցէք: Գլուխն ու ոտները ամուր պահեցէք:

Հիւանդն աղաղակում էր, օրհասական ջանքեր էր առնում շարժւելու, բայց հինդ-վեց ափաշատ տղամարդ վրէն նստած չէին թողնում:

— Ո՞ւր ես գնում, — կանչում էին էս ու էն կողմից, վերելից սեղմում ու հրհռում¹¹:

— Հիմի թէ չքրտնի՛:

— Ու նեսօ բիձէն, հիւանդին վրէն նստած, չիբուխը բերանին շարունակում էր իր պատմութիւնը:

— Մի տարի էս մեր Արդարն էլ էսպէս մրսել էր: Ղանթափու¹² ծաղիկ բերին չայ շինեցին խմացրին, սլրաշող¹³ բերին, ջուր արին, տւին իրան, քացախ քսեցին, բան չի դառաւ:

Ասի տղէք, բերէք ես դրան մի քարաբաղնիս անեմ: Թէ՛ դէ դու դիտես: Բերի մի թէժ¹⁴ կրակ արի, Գարան¹⁵ տատի պլուռնդը կոտրած պղինձը ջուր լցրի վրէն դրի, քար հաւաքեցի ամի շեղջը: Ջուրն եփ եկաւ, քարը կարմրեց: Սա թէ՛ վախում եմ: Ախր նա էլ սրա նման մի լեղապատառ ոքմին¹⁶ ա:

— Ադա¹⁷, ընչի՞ ես ասում, Արդարը հօ սրտոտ մարդ ա:

— Վա՛յ է, նրա սրտոտը ո՞րն ա: Մի աշունք ես մի արջի բուն դտայ: Եկայ ասի՝ Արդար, արջի բուն եմ գտել, արի, դնայք արջին բնիցը հանենք: Գնացինք: Ես մի ձող վեր կալայ էս արջի բունը խրխթորեցի: Մին էլ յանկարծ էն անտէր արջը դուրս եկաւ ու ինձ կալաւ: Արդար, քոմադ հա քոմադ¹⁸: Ո՛ւ վ կտայ Արդար — մին էլ տեսնեմ հրէն փախած գնում ա: Արջի ձեռիցը մի կերպով պրծայ եկայ տուն: Ասում եմ, ադա, դու էս ի՞նչ արի: Թէ՛ եկայ տուն որ թվանք բերեմ: Սուտ: Վախիցը փախաւ:

11 Հրիադ. ծիծաղիլ, քրքջալ, վրան խնդալ:

12 Ղանթափ. դեղին խոշոր ծաղիկներով բոյս մը՝ որու ծաղիկն թէյը հաղի դեղ կը համարուի:

13 Պրաշոկ (ռս.). փոշի (դեղի):

14 Թէժ (կրակ). ուժով, բոցալառ (կրակ): 15 Գարան. Գայիանէ:

16 Ոփմիմ. մէկը, ոմն, (ոմն ոք, մի ոք): 17 Ադա. ծօ:

18 Քոմադ հա քոմադ, օգնութիւն, օգնութիւն:

19 Հրէ (հրէս - հրէդ - հրէն). ահա, այստեղ, այնտեղ եւն.:

— Էն էի ասում — Հիմի սա կանգնել ա, թէ Նէսօ ջան վախենում եմ, ինձ քարաբաղնիս մի՛ անիլ:

Ականջ չդրինք, բերինք կէծացած²⁰ քարերը եփման ջուրը լցրինք ու հէնց էնպէս բուղը²¹ վեր ըլելով սրա հետ կոխեցինք տեղի տակը. — Վա՛յ, մեռայ հա, մեռայ: Լսողն ո՞վ ա: Վրէն նստոտեցինք: Ես եմ, էս մեր Ղուկասն ա, Փիլոն ա, Գաբոն ա, Արութն ա: Հիմի սա տակիցը դուռում ա, վո՛նց ա դուռում... Էնքան դուռաց մինչեւ դինջացաւ²²: Բաց արինք, տեսանք ջուր ա կտրել: Էն էր ու էն, լաւացաւ, տեղիցը վեր կանգնեց ողջ առողջ մարդ: Նեսօ բիճու պատմութիւնը որ վերջացաւ, վեր կացան վերմակները հո քաշեցին: Գոլորշին օդէն բռնեց: Բայց Կիրակոսը...

— Կի՛րակոս:

Ժաժ²³ չի գալի:

— Կի՛րակոս...

Պատասխան չի տալի:

— Կիրակո՛ս. — ձէն տւին, շարժեցին, քաշքշեցին, Կիրակոս չկայ:

— Ա՛յ տղայ, էս ո՞նց էլաւ, — մոլորւած արտասանեց Նեսոն: Միւսները լուռ էին:

— Վա՛յ, տունս քանդւեց... Ծղրտա՛ց²⁴ Կիրակոսի կինը: Իրար հրհրելով տղէքը դուրս եկան կտուրը: Ու մինչդեռ ներքեւ Կիրակոսի կինը սուգ էր անում, կտերը արեւում նստոտած տղէքը պատմում էին, թէ քանի-քանի հոգի են խեղդւել քարաբաղնիսից. Հանըսանց Հարոնը, Մեղքոնանց Վանէսը, Հախվերդոնց Ադէն, Շիմալանց Շամիրը... ո՞ր մի՛նն ասես:

— Տօ՛ դէ ճակատի դիր ա էլի, հօ նրան էլ Նեսոն չի խեղդել:

Նեսոն լուռ, դուռիս կախ արած լսում էր ու չիբուխ էր քաշում

1910

²⁰ Կէծացած. կայծ-կրակ դարձած:

²¹ Բուղ. չողի, դոլորշի:

²² Դիմջանալ. հանգստանալ:

²³ Ժաժ գալ. շարժիլ:

²⁴ Ծղրտալ. ճշալ, աղաղակել:

ԱՆԽԵԼՔ ՄԱՐԴԸ

Ժամանակով մի աղքատ մարդ կար. որքան աշխատում էր, որքան չարչարում էր, դարձեալ միեւնոյն աղքատն էր մնում:

Յուսահատւած մի օր նա վեր կացաւ, թէ՛ պէտք է գնամ գտնեմ Աստծուն, տեսնեմ ես երբ պէտք է պրծնեմ այս աղքատութիւնից, ու ինձ համար մի բան խնդրեմ:

Ճանապարհին մի դայլ պատահեց:

— Առաջ բարի, մարդ-ախպէր, ո՞ւր ես գնում, — հարցրեց դայլը:

«Գնում եմ Աստծու մօտ, — պատասխանեց աղքատը, դարդ²⁵ ունեմ ասելու»:

— Դէ որ գնաս Աստծու մօտ, — խնդրեց դայլը, — ասա մի սոված դայլ կայ, գիշեր ցերեկ ման է դալիս սար ու ձոր, ուտելու բան չի գտնում, ասա՛ մինչեւ ե՞րբ պէտք է սոված մնամ. որ ստեղծել ես՝ ինչո՞ւ չես կերակուր հասցնում:

«Լա՛ւ,» ասաց մարդն ու շարունակեց ճանապարհը:

Շատ գնաց թէ քիչ, պատահեց մի սիրուն աղջկայ.

«Ո՞ւր ես գնում, ախպէր,» հարցրեց աղջիկը:

«Գնում եմ Աստծու մօտ»:

— Երբ որ Աստծուն տեսնես, — աղաչեց սիրուն աղջիկը, — ասա մի այսպիսի աղջիկ կայ՝ Զահել, առողջ, հարուստ — բայց չի կարողանում ուրախանալ, բախտաւոր զգալ իրան — Ի՞նչ պիտի լինի նրա ճարը:

«Կասեմ.» խոստացաւ ճամբորդն ու գնաց. պատահեց մի ծառի, որ թէեւ ջրափին էր կանգնած, բայց չոր էր:

— Ո՞ւր ես գնում, ա՛յ ճամբորդ, — հարցրեց չոր ծառը:

«Գնում եմ Աստծու մօտ»:

— Դէ կանգնի՛ր, մի երկու խօսք էլ ես ապսպրեմ, — խնդրեց չոր ծառը, — Աստծուն կասես, այս ի՞նչ բան

25 Դարդ. հող, մտահոգութիւն:

է. բուսել եմ այս պարզ ջրի ափին, բայց ամառ-ձմեռ չոր եմ մնում. ե՞րբ պէտք է ես էլ կանաչեմ:

Այս էլ լսեց աղքատն ու շարունակեց ճանապարհը:

Այնքան դնաց մինչեւ գտաւ Աստծուն: Մի բարձր ժայռի տակ, մէջքը ժայռին դէմ տւած, ալեւոր մարդու կերպարանքով նստած էր Աստուածը:

«Բարի օր,» ասաց աղքատն ու կանգնեց Աստծու առաջին:

— Բարով եկար, պատասխանեց Աստուած, — ի՞նչ ես ուզում:

«Էն եմ ուզում, որ ամեն մարդի էլ հաւասար աչքով մտիկ անես, մէկին աւար²⁶ չանես, միւսին խաւար. ես այնքան տանջւում, աշխատում եմ, էլ չեմ կարողանում կուշտ փորով հաց գտնեմ, իսկ շատերը, որ իմ կէսի չափ էլ չեն աշխատում, հարուստ ու հանգիստ ապրում են:»

— Դէ դնա՛, հիմի կհարստանաս, քո բախտը տւեցի, դնա վախելի՛ր, — ասաց Աստուած:

«Էլ բան ունեմ ասելու, Տէ՛ր.» ասաց աղքատն ու պատմեց սոված դայլի, սիրուն աղջկայ ու չոր ծառի ապրսպրանքը:

Աստուած բոլորի պատասխանը տւեց եւ աղքատը շնորհակալութիւն արաւ ու հեռացաւ:

Վերադարձին պատահեց չոր ծառին:

— Ինձ համար ի՞նչ ասաց Աստուած, — հարցրեց չոր ծառը:

«Ասաց, քո տակին ոսկի կայ. մինչեւ այդ ոսկին չհանեն, որ արմատներդ հողին հասնեն, դու չես կանաչել,» պատմեց մարդը:

— Էլ ո՞ւր ես դնում. արի՛ ոսկին հանիր էլի, համ քեզ օգուտ կը լինի, համ ինձ, դու կը հարստանաս, ես էլ կը կանաչեմ:

«Չէ՛, ես ժամանակ չունեմ, շտապում եմ,» պատասխանեց աղքատը, «Աստուած ինձ բախտ տւեց, ես պէտք է դնամ իմ բախտը գտնեմ, վախելեմ.» ասաց ու դնաց:

²⁶ Աւար (աւարա). անտես, անգործ (?):

Յետոյ սիրուն աղջիկը պատահեց ու ճամբորդի առաջը կտրեց.

— Ի՞նչ լուր բերիր ինձ համար:

«Աստուած ասաց՝ դու պիտի քեզ համար մի մտերիմ կեանքի ընկեր դառնաս, այն ժամանակ էլ տխուր չես լինիլ, ուրախ ու երջանիկ կը լինես:»

— Դէ որ այդպէս է, արի՛ դու եղիր իմ կեանքի մտերիմ ընկերը, — թախանձեց աղջիկը ճամբորդին:

«Ձէ՛, ես քեզ ընկերակցելու ժամանակ չունեմ, Աստուած ինձ բախտ է տւել, պէտք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ,» ասաց աղքատն ու հեռացաւ:

Ճանապարհին սպասում էր սոված դայլը, հեռւից հէնց որ տեսաւ ճամբորդին, վազեց առաջը կտրեց:

— Հը, Աստուած ի՞նչ ասաց.

«Ախպէր, Աստծու մօտ գնալիս քեզանից յետոյ մի սիրուն աղջիկ ու մի չոր ծառ էլ պատահեցին. աղջիկն ապապրեց, թէ ինչու ինքը չի կարողանում ուրախանալ, ծառն էլ թէ՛ ինչո՞ւ է դարուն, ամառ չոր: Աստծուն պատմեցի, ասաց — աղջկանն ասա իրան համար մի կեանքի ընկեր դառնի — կը բախտաւորուի, ծառին էլ ասա, քո տակին ոսկի կայ, պէտք է այդ ոսկին հանեն, արմատներդ հողին հասնեն, որ կանաչես: Եկայ իրանց պատմեցի Աստծու խօսքերը. ծառն ասաց, դէ արի, հանիր ոսկին տար, աղջիկն էլ թէ՛ ես հէնց քեզ եմ ընտրում ինձ ընկեր: Ասացի, չէ՛, ախպէր, չեմ կարող, Աստուած ինձ բախտ է տւել պէտք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ:»

— Իսկ ինձ համար ի՞նչ ասաց Աստուած, — հարցրեց սոված դայլը:

«Քեզ համար էլ ասաց՝ սոված ման կըգաս՝ մինչեւ մի անխելք մարդ կգտնես, կուտես, կկշտանաս:»

— Էլ քեզանից անխելք մարդ ո՞րտեղ գտնեմ, որ ուտեմ, — ասաց դայլն ու կերաւ անխելք աղքատին:

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ

Ժամանակով մի մարդ ու մի կին են լինում:

Էս մարդ ու կնիկը իրար հաւանելիս չեն լինում:

Մարդը կնիկանն է ասում յիմար, կնիկը մարդուն, ու միշտ կռւելիս են լինում:

Մի օր էլ մարդը մի քանի փութ²⁷ եղ ու բրինձ է առնում, տալիս մշակի շալակը, տանում տուն:

Կնիկը բարկանում է.

— Ա՛յ, որ ասում են յիմար ես, չես հաւատում, էսքան եղն ու բրինձը միանգամից ինչի՞ համար ես առել բերել. հօրդ քե՞լեխն²⁸ ես տալիս, թէ տղիդ հարսանիքն ես անում:

— Ի՞նչ քելեխ, ի՞նչ հարսանիք, ա՛յ կնիկ, ի՞նչ ես խօսում, տար պահի բարեկենդանի համար է:

Կնիկը հանդստանում է, տանում է պահում:

Անց է կենում մի առժամանակ, էս կնիկը սպասում է, սպասում է, բարեկենդանը դալիս չի: Մի օր էլ շէմքումը նստած է լինում, տեսնում է մի մարդ վռադ-վռադ²⁹ փողոցով անց է կենում: Ձեռը դնում է ճակատին ու ձէն տալի:

— Ա՛խպէր, ա՛խպէր, հալա մի կանդնի:

Տղէն կանդնում է:

— Ա՛խպէր, բարեկենդանը դու հօ չե՞ս:

Անցւորականը նկատում է, որ էս կնիկայ ծալը³⁰ պակաս է, ասում է՝ հա՛, ասեմ, տեսնեմ ի՞նչ է դուրս դալի:

— Հա, ես եմ բարեկենդանը, քոյրիկ ջան, ի՞նչ ես ասում:

— Էն եմ ասում, որ մենք քո ծառան հօ չենք, որ քո եղն ու բրինձը պահենք: Ինչ որ պահեցինք, հերիք չէ՞ր... չե՞ս ամաչում... Ընչի՞ չես դալի քո ապրանքը տանում...

— Դէ էլ ի՞նչ ես նեղանում, քոյրիկ ջան, ես էլ հէնց

27 փութ. (ուս.) . Ռուսական ծանրութեան չափ 16 քիլոյի չափ:

28 Բելիսի. հոգեհաց, մեռելահաց:

29 վռադ-վռադ. արագ արագ, աճապարանքով:

30 Ծալը պակաս. խելքը պակաս, անխելք:

դրա համար եմ եկել, ձեր տուն էի ման գալի³¹, չէի գտնում:

— Դէ արի տար:

էս մարդը ներս է մտնում, սրանց եղն ու բրինձը շալակում ու կրունկը դէսն է անում, երեսը դէպի իրենց դիպը:

Մարդը գալիս է տուն, կնիկն ասում է.

— Հա՛, էն բարեկենդանն եկաւ, իր բաները իրեն սեւցրի³² տարաւ:

— Ի՞նչ բարեկենդան... Ի՞նչ բաներ...

— Ա՛յ էն եղն ու բրինձը... Մի էլ տեսնեմ՝ վերեւից գալիս է. մեր տունն էր ման գալի. կանչեցի, մի լաւ էլ խայտառակ արի, շալակը տւի տարաւ:

— Վայ քու անխելք տունը քանդւի, որ ասում եմ յիմար ես — յիմար ես էլի... Ո՞ր կողմը գնաց:

— Ա՛յ էն կողմը:

էս մարդը ձի է նստում, ընկնում բարեկենդանի ետեւից: Ճանապարհին բարեկենդանը ետ է մտիկ անում, տեսնում է՝ մի ձիաւոր քած գալիս է: Գլխի է ընկնում³³, որ սա էն կնկայ մարդը պէտք է լինի:

Գալիս է հասնում իրեն:

— Բարի օր, ակազբացու:

— Աստծու բարին:

— Հօ էս ճամփովը մարդ չի անց կացաւ:

— Անց կացաւ:

— Ի՞նչ ունէր շալակին:

— Եղ ու բրինձ:

— Հայ հէնց էդ եմ ասում: Ի՞նչքան ժամանակ կլինի:

— Բաւական ժամանակ կլինի:

— Որ ձին քչեմ՝ կհասնե՞մ:

— Ո՞րտեղից կհասնես, դու ձիով, նա ոտով: Մինչեւ քու ձին չորս ոտը կփոխի — մի՛ն, երկո՛ւ, երե՛ք, չո՞րս, նա երկու ոտով մէ՛կ-երկո՛ւ, մէ՛կ-երկո՛ւ, մէ՛կ-երկո՛ւ, շուտ-շուտ կգնայ, անց կկենայ:

31 Ման գալ. փնտռել, որոնել. նաեւ շրջել, թափառել:

32 Սեւցնել — սեւցրի. անարգարար ակամայ մէկուն բան մը տալ:

33 Գլխի ընկնել. մտածել, խորհել:

— Բա ի՞նչպէս անեմ:

— Ինչպէս պէտք է անես. ուզում ես, ձիդ թող ինձ մօտ, դու էլ նրա պէս ոտով վալի, դուցէ հասնես:

Հա՛, էդ լաւ ես ասում:

Վէր է դալիս, ձին թողնում սրա մօտ ու ոտով ճանա-
նապարհ ընկնում: Սա հեռանում է թէ չէ, բարեկենդա-
նը չալալը բարձում է ձիուն, ճամփէն ծռում, քշում:

Էս մարդը ոտով դնում է, դնում է, տեսնում է չհասաւ,
ետ է դառնում: Ետ է դառնում տեսնում՝ ձին էլ չկայ:
Գալիս է տուն: Նորից սկսում են կուել, մարդը եղ ու
բռնձի համար, կնիկը ձիու:

Մինչեւ օրս էլ մարդ ու կնիկը կուում են դեռ: Սա
նրան է ասում յիմար, նա սրան, իսկ բարեկենդանը լը-
սում է ու ծիծաղում:

1911

ՍՈՒՏԼԻԿ ՈՐՍԿԱՆԸ

Հօրս կնուներով, մօրս ծնունդով, վեր կացանք մի օր
հինդ ու վեց հոգով, թրով-թվանքով որսի գնացինք:
Հադին էր, Հիւդին էր, Չատին էր, Մատին էր, հէրս
էր, ես էի, գնացինք որսի:

Սարեր, ձորեր դուդ գնացինք, որտեղ որս կար՝ սուս
ու փուս գնացինք, որտեղ ահ էր՝ կուդ ու կուդ գնացինք...

Գնացի՛նք, գնացի՛նք, շատ թէ՛ քիչ, մին էլ տեսնե՛ք
երեք լիճ. երկուսը ցամաք, մընի մէջ էլ իսկի ջուր չկայ:
Մին էլ բճը, մտիկ տանք, որ էս անջուր լճում լողում
են ճչում երեք հատ սիպտակ բադ, երկուսը սատկած
են, մինն էլ կենդանի չի:

— Հադի՛, տո՛ւր հա, տո՛ւր:

Թէ՛ թվանք չունեմ:

— Հիւդի՛, տո՛ւր, հա, տո՛ւր:

— Ես էլ չունեմ:

— Չատի... Մատի...

— Մենք էլ չունենք:

— Բա ի՞նչ անենք...

Հօրս ձեռին կարճ ու երկար, հաստ ու բարակ մի փէտ կար. երեսն առաւ, նշան դրեց, մին էլ՝ տրա՛ք, որ կրակեց... Նա կրակեց, ես զարկեցի. որ զարկեցի՝ փուկեց էսպէս — ամեն թեւը հինգ դաղ³⁴ ու կէս...

— Հաղի, դանա՛կ...

Թէ՛ դանակ չունեմ:

— Հիւդի, դու...

— Նս էլ չունեմ:

— Չատի՞, Մատի՞...

— Մենք էլ չունենք:

— Բա ի՞նչ անենք...

Հէրս էլ ունի, բերան չունի:

Էս անբերան դանակը քաշեցինք: Հաղին մորթեց, չկարաց. Հիւդին մորթեց, չկարաց, Չատին չկարաց, Մատին չկարաց, հէրս էլ չկարաց, ե՛ս քաշեցի մորթեցի:

Մորթեցի, վէր դցեցի. բաղ — մի ասիլ մի դոմէշ ասա: Հաղին չալակեց, չկարաց. Հիւդին չալակեց, չկարաց, Չատին չկարաց, Մատին չկարաց, հէրս էլ չկարաց, ե՛ս չալակեցի: Ծալակեցի, դնացինք:

Գնացինք, դնացինք, հասանք մի տեղ, մին էլ տեսնենք երեք դեղ, երկուսի տեղն իսկի չի երեւում, մընումն էլ իսկի չէնլիկ³⁵ չկայ: Էս անչէն դեղում դէս ման եկանք, դէն ման եկանք, մի տուն գտանք, մէջը երեք պառաւ, երկուսը մեռած, մնի բերնումն էլ չունչ չկայ:

— Տղերք, ասինք, եկէք բազուլ փլաւ անենք:

Էս անշունչ պառաւը դնաց դէս ման եկաւ, դէն ման եկաւ, կէս բրինձ գտաւ, երեք սղինձ, երկուսը ծակ, մինն էլ իսկի տակ չունի:

Ջուրը լցրինք էս անտակ սղինձը, մէջը ածինք բաղն ու բրինձը, անկրակ եփեցինք: Նոյն, եփեց, միսն ու բրինձը դնացին, մնաց ջուրը:

Որսից եկած սոված մարդի՛կ, վրայ եկանք, կերա՛նք, կերա՛նք, ոչ աչքերս բան տեսաւ, ոչ բերաններս բան մտաւ:

1910

³⁴ Գաղ. մեթը (չափ երկայնութեան):

³⁵ Շէնլիկ. մարդ, մարդասան:

ՅԱՆԿ

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ (Կեանք և գործ) 5

ԵՐԳԵՐ

Նախերգանք	31
Հին օրհնութիւն	32
Գուրանի երգը	33
Համերգ	34
Քրիստոսն անապատում	34
Հայ Ուխտաւորին	35
Ինձ մի՛ խնդրիր	37
Անդարձ նամբորդներ	37
Տրտմութեան սաղմոսներից	38
*** Տաղով եկաւ	39
Դու քո նամիւն	40
Մարգարէութիւն	40
Հայոց լեռներում	41
Վայրէջք	43
Հայրենիքիս հետ	44
Հոգեհանգիստ	45
Իմ երգը	46

ԲԱՌԵԱԿՆԵՐ 47-52

ԼԵԳԵՆԴ - ԲԱԼԼԱԴ - ԱՌԱԿ

Աղւէս	53
Կախաւի գովքը	54
Երկրում	55
Շունն ու կատուն	62
Ախրամար	65
Փարւանա	67
Լուսաւորչի կանքեղը	73
Մի կաթիլ մեղրը	74
Աղաւնու վանքը	79

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ - ՀԵՔԵԱԹՆԵՐ

Գարօ բիձու շերամապահութիւնը	83
Նետոյի ֆարաբաղնիսը	85
Անխել փարդը	88
Բարեկենդանը	91
Սուտիկ որսկանը	93



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220028041

20 n

II
28041

9, 15